Azg
armenian daily

8 ՅՈՒԼԻՍ 2000 ՇԱԲԱԹ 126 (2094)

Հոկտեմբերի 27-ի գործով նախաքննությունը կավարտվի 5 օրից

ԵՐԵՎԱՆ, 7 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հոկտեմբերի 27-ի գործով նախաքննությունը կավարտվի 5 օրվա ընթացքում: Հայտնելով այս մասին, ՀՀ զինդատախազության քննչական բաժնի պետ, նախաքննությունն իրականացնող քննչական խմբի ղեկավար Արտակ Հարությունյանը տեղեկացրեց, որ ահաբեկչական ակտն իրականացրած խմբի 7 անդամների եւ մեղադրյալ Արմեն Հարությունյանի նկատմամբ մեղադրանքի ծավալը փոխվել է, նոր մեղադրանքներ են ներկայացվել: Սակայն նա առայժմ ձեռնպահ մնաց հայտնել, թե որ հոդվածներով են մեղադրանքներ առաջադրվել:

Պրն Հարությունյանը նշեց նաեւ, որ գործի մեկ միասնական վարույթով կամ առանձնացված մասերով դատարան մտնելու մասին որոշում կկայացվի նախաքննությունն ավարտվելուց անմիջապես առաջ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դժվար է խոսել այն մասին, ինչն ամենուր է եւ դարձել է սովորական

ՀՀ դատախազության ներկայացուցիչները փորձեցին անկեղծանալ

ԼՈՒԻԶ ԴՈՎԼԱԹՅԱՆ

Իրավապահ մարմինների հանդեմ քաղաքացիների հավատն ու վստահությունը հաղթանակող անօրինականության մեր ժամանակներում մեծ անկում են ապրում: Վաղուց է հասունացել պահը, երբ մարդիկ անկեղծություն ու անկաշառություն են սպասում օրենքի պաշտպաններից:

Վերոհիշյալ նկատառումներով էր պայմանավորված հանդիպումը, որ երեկ կայացավ ՀՀ դատախազության մի քանի վարչությունների պետերի ու լրատվամիջոցների միջեւ ժուռնալիստների միության դահլիճում: Հիշեցնելով, որ դատախազությունն, իրավապահ այլ մարմիններից թվում, միակ սահմանադրական կառույցն է՝ նրանք փորձեցին հնարավորինս անկեղծանալ ու մանրակրկիտ լինել իրենց բացատրություններում: Զրույցի թեման տնտեսական հանցագործություններն էին:

Պետական շահի պաշտպանության վարչության պետը (այս նորաստեղծ վարչությունն, ի դեպ, մասնագիտացած է հենց տնտեսական հանցագործությունների բացահայտման գործում) տեղեկացրեց, որ իրենք զբաղվում են պետական գույքի հափշտակմանն առնչվող հարցերով, եւ արդեն հաստատել են քրեական գործ հարուցել 12,5 մլրդ դրամի ընդհանուր յուրացումների բացահայտման կապակցությամբ: Յուրաքանչյուր դժգոհություն հնչեց վարչության պետ պրն Դանիելյանի խոսքերում, երբ նշեց, որ իրենք իրավասու չեն ամենուր մուտք գործելու եւ ստուգումներ կատարելու՝ փաստորեն միայն «հատուկ» առիթներով թափանցելով ձեռնարկություններ եւ տնտեսական այլ կառույցներ. իրենց ստուգումների հիմնական «զոհն» այսպիսով, տեղական ինքնակառավարման եւ պետական մարմիններն են: «Աղբյուրները, որոնցից վարչությունն ահազանգ է ստանում այս կամ այն կառույցում չարաշահման վերաբերյալ, բավականին փոքրաթիվ են դարձել. թեպետ ունենք նաեւ զաղտնի տեղեկատուներ, սակայն տեղեկատվության պակաս, այնուամենայնիվ, զգացվում է», ասաց նա: Տնտեսական հանցագործությունների վերաբերյալ իր ընդհանուր բնույթի դատողությունները պրն Դանիելյանը եզրափակեց այն փաստով, որ չարաշահումների դիմելու մեծ «հավակնություն» ունեն իսկապես տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց ենթակայությանը հանձնված գույքը չի համարվում պետական սեփականություն: Նշեց նաեւ, որ տնտեսական հանցագործությունների հիման վրա հարուցված քրեական գործերի ընդհանուր թիվը 25 է:

Տես էջ 2

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Վերաբացվում է Ս. Կատարինե հայոց եկեղեցին

Պետերբուրգի հայերը հուզառաս եռուզեռի մեջ են. երեկ շաբաթվա սկզբին Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքում հանդիսավորապես վերաբացվում է, ինչպես ժամանակին էին անվանում, Նեւսկի պողոտայի մարգարիտը՝ Ս. Կատարինե հայոց եկեղեցին: Տեւական ընդմիջումից հետո տեղի հայերի առջեւ իր դռներն է բացում հոգեւոր մի օջախ, որի կրած «բոլշեւիկյան» փորձությունները միայն մռայլ զգացումներ են առաջացնում: Սա տեղի հոգեւոր առաջնորդ եզրաս Ներսիսյանի ու նրա հովվությամբ վերականգնման հսկայածավալ աշխատանքներն իրականացրած պետերբուրգցի ազնիվ հայերի շնորհն է մեր նախնյաց երկրում քրիստոնեության պետականացման մոտալուտ հոբելյանին:

Հայ եկեղեցու ու ազգի կյանքի այս հիրավի հիշարժան իրադարձության առթիվ Ս. Պետերբուրգ կժամանեն Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Բ-ն: Ոչ պաշտոնական տվյալներով չի բացառվում նախագահ Վլ. Պուտինի ներկայությունը, եթե նա այդ օրերին ներքեւական հարցերով այցելի իր հայրենի քաղաք: Հանդիսավոր միջոցառմանը ներկա կլինի քաղաքի ղեկավարությունը՝ նահանգապետ Յակովլեւի գլխավորությամբ: Հայկական մեծ «դեսանտ» է սպասվում Մոսկվայից՝ Ռուսաստանում Հայաստանի դեսպան Սուրեն Սահակյանի ղեկավարությամբ:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ս. Պետերբուրգ

Գիտնականները զգուշացնում են Քլինթոնին

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 7 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ամերիկյան 50 ականավոր գիտնականներ, Նոբելյան մրցանակի դափնեկիրներ, հուլիսի 7-ին դիմել են նախագահ Քլինթոնին նախազգուշացմամբ, որ հակահրթիռային պաշտպանության նոր համակարգի ստեղծման նրա ծրագրերը վաղաժամկետ են, չափազանց թանկ եւ վտանգավոր: Բաց նամակում գիտնականները նախազգուշացրել են, որ ազգային հակահրթիռային վահանի շինարարությունը չի կարող պաշտպանել երկիրը հարձակումից եւ կործանարար կլինի Ամերիկայի ազգային շահերի համար, քանի որ անխուսափելիորեն կառաջացնի սպառազինությունների նոր մրցավազք: Նամակը հրապարակվել է հրթիռային ոչնչացման համակարգի երրորդ փորձարկման նախօրյակին: Նախընթաց փորձարկումներից մեկի ժամանակ հրթիռը խփել չի հաջողվել, մյուսի դեպքում խփվել է: Երրորդ տեսի արդյունքը կարեւոր կդառնա նախագահ Քլինթոնի որոշման համար, թե արդյոք կիրականացվի՞ 60 մլրդ. դոլար արժողությամբ համակարգի շինարարության ծրագիրը:

Միլոշեւիչը հավակնում է ցմահ նախագահության

ԲԵԼԳՐԱԴ, 7 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հարավսլավիայի միութենական Սկուպշչինան հուլիսի 7-ին ընդունել է սահմանադրական ուղղումներ, որոնք թույլ են տալիս նախագահ Սլոբոդան Միլոշեւիչին ընտրվել երկրորդ ժամկետով: Բացի այդ, այսուհետ Հարավսլավիայի Դաշնության ղեկավարը ընտրվելու է խորհրդարանի կողմից, այլ ոչ թե համաժողովրդական ընտրություններով: Կառավարող Սոցիալիստական կուսակցությունը հայտարարել է, որ Միլոշեւիչը լինելու է իր թեկնածուն նախագահական ընտրություններում, որ, ամենայն հավանականությամբ, կկայանան տարեվերջին: Այդ փոփոխությունները հարուցել են Չեռնոգորիայի հիվանդագին հակազդեցությունը, հաղորդում է BBC-ն: Պոդգորիցան Միլոշեւիչին մեղադրել է ցմահ նախագահ դառնալու մտադրության մեջ:

ԱՎՍՏՐԻԱ

ԵԱՀԿ գործող նախագահը ղարաբաղյան խնդրից բավարար տեղեկություն չունի

ԲԱԿՈՒ, 7 ՀՈՒԼԻՍ, ՍՆԱՐՔ: Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման առնչությամբ նոր առաջարկություններ դեռ չկան, սակայն կողմերը պետք է շարունակեն բանակցությունները: Այդ մասին հայտարարել է հուլիսի 6-ին Վիեննայից վերադարձած Հեյդար Ալիեւը, որտեղ նա գտնվել է եռօրյա աշխատանքային այցով:

Ալիեւը դարձյալ նշել է, որ հակամարտությունը կկարգավորվի միջազգային կազմակերպությունների եւ ԵԱՀԿ-ի աջակցությամբ եւ որ ղարաբաղյան հակամարտության կարգավորման անհրաժեշտության վերաբերյալ Եվրախորհրդի հետ կնքած համաձայնագիրը դեռ չի նշանակում դրա լուծում:

Ադրբեջանի նախագահը բարձր է գնահատել Վիեննա կատարած այցի արդյունքները: Նա նշել է, որ արդյունավետ զրույց է ունեցել Ավստրիայի արտգործնախարար, ԵԱՀԿ գործող նախագահ Բենիտա Ֆերերո-Վալդների հետ, որը հուլիսի 16-17-ին պետք է այցելի Հայաստան եւ Ադրբեջան: Ալիեւի խոսքերով, ԵԱՀԿ գործող նախագահը ղարաբաղյան խնդրի առնչությամբ բավարար տեղեկություն չունի:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Օգոստոսի 1-ից ուժի մեջ կմտնի ակցիզային հարկի նոր օրենքը

Փոփոխություններ պետական տուրքի օրենքում

ԵՐԵՎԱՆ, 7 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ՀՀ ԱԺ-ն հուլիսի 7-ին երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց «Ակցիզային հարկի մասին» նոր օրենքի նախագիծը: Այն ուժի մեջ կմտնի 2000 թ. օգոստոսի 1-ից: Ուժը կորցրած կճանաչվի 1997 թ. հունիսի 24-ի համանուն օրենքը:

Նոր օրենքով սահմանվում են ակցիզային հարկի հաշվարկման եւ վճարման կարգի, հարկի դրույքաչափերի մի շարք սկզբունքային փոփոխություններ: Մասնավորապես, ակցիզային հարկի արժեքային հիմքով հաշվարկման ներկա կարգը փոխարինվում է հարկի հաստատագրված դրույքաչափերով: Եթե մինչ այժմ ակցիզային հարկը հաշվարկվում էր մաքսային արժեքի նկատմամբ 10 տոկոս դրույքաչափով, ապա այժմ, օրինակ, գարեջրի 1 լիտրի համար ներկրողը կվճարի 70 դրամ, խաղողի եւ այլ գինիների համար՝ 100 դրամ, փրփրուն գինիների համար՝ 180, շամպայնի՝ 300, վերմուտի եւ խաղողի բուսական եւ արոմատիկ էքստրակտներ պարունակող գինիների համար՝ 500 դրամ, էթիլային սպիրտի համար՝ 600 դրամ ակցիզային հարկ: Օղու, լիկյորների եւ մրգօղիների մեկ շշի համար կգանձվի 150 դրամ: 40 տոկոսից ավելի բարձր սպիրտայնությամբ խմիչքների համար սպիրտայնության 40 տոկոսը գերազանցող յուրաքանչյուր տոկոսային կետի համար հարկի դրույքաչափը կավելանա 8 դրամով:

Ազգային ժողովը երկրորդ-ընթերցմամբ եւ ամբողջությամբ լրացումներ եւ փոփոխություններ կատարեց «Պետական տուրքի մասին» օրենքում: Համաձայն կառավարության կողմից առաջարկված լրացումների, գրավատային գործունեության իրականացման լիցենզիաներ տալու համար սահմանվեց բազային տուրքի հարյուրապատիկի չափով (100 հազար դրամ) տարեկան պետական տուրք: Իսկ շշալցման իրավունքով ոգելից խմիչքների (բացառությամբ գինիների եւ գարեջրի) արտադրության համար՝ 5000-պատիկի չափով (5 մլն. դրամ):

Կառավարության նախաձեռնությամբ ավելացվել է վիճակախաղերի եւ խաղատների գործունեության կազմակերպման լիցենզիա տալու համար տարեկան պետական տուրքի չափը: Ի տարբերություն մինչ այժմ գործող բազային տուրքի 3000-պատիկի (3 մլն. դրամ) սահմանվել է 25000-պատիկի չափով՝ 25 մլն. դրամ: Շահումով խաղերի գործունեության կազմակերպման լիցենզիաներ տալու համար տարեկան պետական տուրքի չափը սահմանվել է բազային տուրքի 5000-պատիկի չափով (5 մլն. դրամ)՝ ի տարբերություն գործող 600-պատիկի (600 հազար դրամ):

ՈՒՇԱԳԻՐ

ԴԱՏԱՐԱՆ

Խմբագրությունում արժանապատվություն չեն բաժանում

Կենտրոն եւ Նորք-Մարաք համայնքների առաջին ատյանի դատարանում հունիսի 29-ին լսվեց խաղաղացուհի Անուշ Հովհաննիսյանի հայցն՝ ընդդեմ «Ազգ» թերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիսյանի եւ լրագրող Սառա Պետրոսյանի: Դիմելով դատարան, հայցվորը խնդրել է պարտավորեցնել խմբագրությանը տպագրելու իր պատասխան-հոդվածը՝ մեր թերթի մարտի 24-ի համարում լրագրող Սառա Պետրոսյանի «Կեղծված փաստաթղթի հիմքով վճիռը դատապարտվա՞ծ է ուժի մեջ մնալու» հրապարակմանն ի պատասխան:

Հայցվորը գտնում է, որ մեր թղթակից Ս. Պետրոսյանը սույն հոդվածով վիրավորել է իր պատիվն ու արժանապատվությունը եւ իր անհամաձայնությունն է հայտնել խաղհայցում նշված 11 կետերով: Հունիսի 29-ին տեղի ունեցած առաջին դատական նիստում թերթի գլխավոր խմբագիր Հ. Ավետիսյանը ներկայացրեց հայցվորի պատասխանը չտպագրելու հիմնավորումները, իսկ Ս. Պետրոսյանը հայցվորի կողմից վիճարկելի, կեղծիք համարվող 11 կետերի վերաբերյալ գրավոր բացատրություններից բացի, դատարանին ներկայացրեց նաեւ հոդվածի համար հիմք հանդիսացող փաստական տպագրությունները:

Այնուամենայնիվ, հայցը քննող դատավոր Ս. Աբրահամյանն ուշ օրով ընդմիջեց դատական նիստը՝ տպագրությունների եւ հայցվոր Անուշ Հովհաննիսյանի իրական գործին ծանոթանալու համար: Հուլիսի 7-ին տեղի ունեցած դատական նիստում ակնկալվում էր հայցվոր կողմի հակափաստարկները պատասխանողի գրավոր բացատրությունների դեմ եւ, ի վերջո, դատարանի որոշման կայացումը: Սակայն, ինչպես պարզ դարձավ դատական նիստի ժամանակ, հայցվորն առարկություն չուներ բերված փաստարկներին:

Մեզ նման հետեւություն անելու հիմք է տալիս այն, որ հայցվորը ոչ մի հակափաստարկ չներկայացրեց, որով հիմնավորեր լրագրողի հրապարակման կեղծ լինելը, առարկեր կամ վիճարկեր այն: Փոխարենը հայցվոր կողմը, ինչպես առաջին դատական նիստում, այնպես էլ երեկ, վիճարկում էր «Ազգի» ներկայացուցիչ փաստաբան Մարինա Ջանոյանի մասնակցության օրինականությունը: Եվ, պատկերացրեք, բավականին ջանք պահանջվեց հիմնավորելու համար, որ փաստաբանն իրավունք ունի դատական նիստին մասնակցելու: Երկու ժամից ավելի տեւած նիստի ընթացքում հայցվորն այդպես էլ անդրադարձ չկատարեց իր իսկ ներկայացրած հայցին՝ պահանջելով միայն տպագրել իրենց պատասխանը: Ընդ որում, պահանջը երբեմն դառնում էր հուզախառն՝ համեմված պատասխանող կողմին ուղղված վիրավորական արտահայտություններով:

Նման դեպքերում իր խոսքը պետք է ասեր դատավորը, սակայն նա, ինչպես երեւում է, չի շտապում, եւ կատարվեց այն, ինչ պետք է կատարվեր: Դատավորը որոշեց դատական նիստը հետաձգել մինչեւ հուլիսի 31-ը, որպեսզի ծանոթանա հոդվածի համար հիմք հանդիսացող խաղ. եւ իրական գործերին: Ս. Պետրոսյանը գտնում էր, որ գործերին ծանոթանալու անհրաժեշտությունը չկար, եւ իր հրապարակման համար հիմք հանդիսացած բոլոր փաստաթղթերն արդեն ներկայացված են դատարան: Դատավորի կողմից գրեթե մեկ ամիս նիստը հետաձգելու վերաբերյալ մեր ենթադրությունն այն էր, որ դատավորը հակված էր գոնե մասամբ բավարարելու հայցվորի պահանջը եւ նրան հնարավորություն տվեց այս ժամանակամիջոցը եւս օգտագործել հայցը հիմնավորելու համար:

Խմբագրությունը մեկ անգամ եւս հիշեցնում է, որ եթե հայցվորը ժամանակին մեր թղթակցի հոդվածը հերքող փաստական տպագրություններ ներկայացներ խմբագրությանը՝ նրա պատասխան հոդվածը կտպագրվեր առանց վերապահումների:

«Ա.»

«Հայերս միշտ ցեխ ենք շպրտում իրար վրա, իրականներն, օրինակ, այդպես չեն»

«Երեւանի պետական համալսարանի բարեկամներ» կազմակերպությունը հերթական բարեգործական ակցիան է ձեռնարկել մայր բուհում. մասնավորապես վերանորոգել իրավաբանական. պատմական եւ ասպվածաբանական ֆակուլտետների մասնաշենները: Այդ առիթով Երեւանում էր կազմակերպության գանձապահ Հովսեփ Սարաֆյանը Դետրոյթից: Նա պոլսահայ ճարտարապետ է. որն արդեն քսան տարի ապրում եւ գործում է ԱՄՆ-ում. բայց ճարտարապետական խորհրդատվությամբ է զբաղվում նաեւ Թուրքիայում. Հայաստանում: «Հայաստանի գիտնականները. մասնագետները պիտի երկխոսություն սկսեն սփյուռքի իրենց գործընկերների հետ եւ ապացուցեն. որ այս երկրում հնարավոր է գործ անել: Դժբախտաբար այդ երկխոսությունը չեմ տեսնում առայժմ», ասաց Հովսեփ Սարաֆյանը «Ազգ»-ին տված հարցազրույցում:



– Փաստորեն, կազմակերպության գործունեության շրջանակներում, միջնորդ հանդիսանալով սփյուռքի եւ Հայաստանի միջեւ, շփվելով թե՛ այստեղ, թե՛ այնտեղ, դժվարություններ ունենո՞ւմ եք:

– Սփյուռքի եւ Հայաստանի հայերը քիչ են գործակցում միմյանց հետ, եւ պատճառը մտածողությունների տարբերությունն է: Հայաստանում պատասխանատվությունները բրգաձեւ են բաշխված. բոլորը կախված են ամենավերեւում կանգնածից: ԱՄՆ-ում պատասխանատվությունները հորիզոնական ժգ: Որեւէ գործի մեջ ամեն մասնագետ իր չափով պատասխանատու է, ինչն էլ միայն բարձր որակ է ապահովում: Հայերս, ամեն մեկս ամեն ինչի մասնագետ ենք եւ համատեղ գործելու կուլտուրա չունենք: Այլապես Հայաստանում շատ արժեքավոր գիտնականներ կան, որոնք պիտի համագործակցեն սփյուռքի մասնագետների հետ: Հայաստանում եղածից ավելի լավ պայմաններ ստեղծելու համար: Չեմ ասում, թե Ամերիկան բերենք այստեղ, բայց ինչ-որ բաներ կարելի է փոխել: Բայց նշածս կարը չկա: Անցյալ տարի գումարվեց Սփյուռք-Հայաստան համաժողովը, որ շատ խաղաղանացված էր: Սփյուռքից օգտվել ուզեցին՝ կարծելով, որ խաղաղական անձինք կարող են օգնել: Հայաստանն ունի չափից առավել կուսակցություններ, խաղաղական գործիչներ: Հայաստանին սփյուռքի հետ փոխհարաբերություններում կոնկրետ մասնագետներ են պետք:

ԼԻԼԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ

– Պրն Սարաֆյան, մանրամասնեք, խնդրեմ, Ձեր այցի նպատակն ու կազմակերպության գործունեությունն ընդհանրապես:

– Կազմակերպությունը հիմնել ենք 1996-ին ԱՄՆ-ում, բարեգործական է: Ինը հոգի ենք, նախագահը ճարտարապետ Վարդգես Բալյանն է, իսկ փոխնախագահը՝ Երվանդ Ազատյանը: Ունենք շատ պատվավոր անդամներ: Մեր նպատակն է ցուցաբերել ամենայն օգնություն ԵՊՀ-ին վերջինիս կրթական, գիտական որակը բարձրացնելու համար: Օգնության գումարները հավաքում ենք աշխարհի բոլոր հայ համայնքների բարեւարներից՝ հավատով, որ հայրենիքի մայր բուհն արժանի է ավելի լավ պայմանների: Ասենք, գումարներ ենք տրամադրում, որ դասախոսները կարողանան հրատարակել իրենց աշխատությունները: Այս պահին մեր բյուջեն ավելի քան կես միլիոն դոլար է կազմում: Այդ գումարով, որի բարեւարն իր անունը տալ չի կամենում, Երեւան եմ եկել համալսարանի երկու մասնաշենքերի վերանորոգումը նախաձեռնելու, որը, ռեկտոր Ռ. Մարտիրոսյանի հավաստմամբ, կավարտվի արդեն այս ուսումնական տարվա սկզբին:

Այստեղ եմ նաեւ ասպվածաբանական ֆակուլտետի մի սրահի վերանորոգումը տեսնելու, որն արդեն գրեթե ավարտված է եւ դարձյալ մեր գործն է: Մեր խնդիրը միայն դրամ հավաքելն ու այստեղ փոխանցելը չէ, ուզում ենք նաեւ որակով աշխատել: Մեզ տալիս են գումարներ՝ դրանց ծախսման նպատակի որակն ապահովելու, հսկելու պայմանով: Իսկ իրագործելիք շատ ծրագրեր ունենք, որոնցում քայլ առ քայլ առաջանալու ենք:

– Փաստորեն, կազմակերպության գործունեության շրջանակներում, միջնորդ հանդիսանալով սփյուռքի եւ Հայաստանի միջեւ, շփվելով թե՛ այստեղ, թե՛ այնտեղ, նատվությունները հորիզոնական ժգ: Որեւէ գործի մեջ ամեն մասնագետ իր չափով պատասխանատու է, ինչն էլ միայն բարձր որակ է ապահովում: Հայերս, ամեն մեկս ամեն ինչի մասնագետ ենք եւ համատեղ գործելու կուլտուրա չունենք: Այլապես Հայաստանում շատ արժեքավոր գիտնականներ կան, որոնք պիտի համագործակցեն սփյուռքի մասնագետների հետ: Հայաստանում եղածից ավելի լավ պայմաններ ստեղծելու համար: Չեմ ասում, թե Ամերիկան բերենք այստեղ, բայց ինչ-որ բաներ կարելի է փոխել: Բայց նշածս կարը չկա: Անցյալ տարի գումարվեց Սփյուռք-Հայաստան համաժողովը, որ շատ խաղաղանացված էր: Սփյուռքից օգտվել ուզեցին՝ կարծելով, որ խաղաղական անձինք կարող են օգնել: Հայաստանն ունի չափից առավել կուսակցություններ, խաղաղական գործիչներ: Հայաստանին սփյուռքի հետ փոխհարաբերություններում կոնկրետ մասնագետներ են պետք:

ԼԻԼԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԵՄ-ԴՐՍԱԾ

Վարչապետը հանդիպեց ՀԼՄ-ների ղեկավարներին

Երեկ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը հանդիպեց զանգվածային լրատվության միջոցների ղեկավարների հետ:

Կարեւորելով ՀԼՄ-ների դերը կառավարության, ծյուղային գերատեսչությունների վարած տնտեսական խաղաղականության, ընդհանուր գործունեության լուսաբանման խնդրում, վարչապետը գլխավոր խմբագիրների եւ տնօրենների ուշադրությունը հրավիրեց հատկապես արտաքին քաղաքական արդյունավետ կազմակերպման վրա: Առաջնային խնդիրներից է նաեւ երկրում առկա գործընթացների անաչառ ներկայացումը, առողջ քննադատության կողքին նաեւ եղած դրականը հանրությանը մատուցելը, ինչը կնպաստի հանրապետությունում բարոյահոգեբանական դրական մթնոլորտի ձեւավորմանը:

ՀԼՄ-ների ղեկավարները հնարավորություն ունեցան ներկայացնելու իրենց առջեւ ծառացած խնդիրները, որոնք մասնավորապես առնչվում էին օրենսդրական դաշտի անկատարությանը, պետական, իրավական, տնտեսական կառույցներ-ՀԼՄ-ներ փոխհարաբերություններին, տեղեկատվության մատչելիության հարցերին, ինչպես նաեւ ՀԼՄ-ների տնտեսական վիճակին:

Զանգվածային լրատվության միջոցների ղեկավարները կարեւորեցին նման հանդիպումների անհրաժեշտությունը: Պայմանավորվածություն եղավ այդ հանդիպումները դարձնել պարբերական:

Դժվար է խոսել այն մասին, ինչն ամենուր է եւ դարձել է սովորական

Սկիզբը էջ 1

Աժ էներգետիկ ժամանակավոր հանձնաժողովն ու ՀՀ դատախազությունը

Բնականաբար, առաջին հարցն առնչվում էր Աժ էներգետիկ հանձնաժողովի աղմկահարույց հրապարակմանը. պատրաստվո՞ւմ է արդյոք դատախազությունը իրական գործ հարուցել Դավիթ Լոխյանի հրապարակած տվյալների հիման վրա: Ի պատասխան տեղեկացանք, որ գործը հարուցված է, արդեն կազմվել է քննչական մի ընդարձակ խումբ, որն ապրիլ զբաղված է պատգամավորական հանձնաժողովի հաշվետվության ուսումնասիրմամբ: Ինչ վերաբերում է երբեմնի վարչապետ Հրանտ Բագրատյանի հայտարարությանը, թե իրեն զրպարտելու համար իրական գործ է հարուցելու հանձնաժողովի դեմ, ապա, ինչպես տեղեկացանք, ապրիլ նա այդ քայլը չի արել: «Եթե կարծում եք, թե հանձնաժողովի բացահայտումների արդյունքում ինչ-որ մեկը պիտի գա եւ գումարի մի մասը վերադարձնի, չարաչար սխալվում եք. քանի դեռ այդ մարդկանց մեղքն ապացուցված չէ, փոխհատուցում սպանալը չի սպացվի», արձանագրեցին դատախազության ներկայացուցիչները: Իսկ ի՞նչ խոչընդոտ ունի դատախազությունը՝ պահանջվող ապացույցներն ու փաստաթղթերը ձեռք բերելու: Ըստ իրենց՝ փաստաթղթեր ձեռք բերելու հասակ մեխանիզմ առ այսօր չկա. մեծ թվով փաստաթղթեր էլ ոչնչացված են: Սակայն, հետեւում է հաջորդ հարցը. մենք մի տխուր փորձառություն ունենք. արդյոք երաշխիք կա՞, որ մինչ ձեր կողմից գործի լիակատար ու հիմնավորված բացահայտումը. մեղավորները չեն փախչի երկրից: «Ոչ», հաջորդում է իմքնավստահ (չգիտես ինչու) պատասխանը: Ի դեպ, քննչական վարչության պետը միանգամայն չցնդեց, թե այդ տարիներին թալանը հասել է հենց 200 մլն դոլարի, ինչպես մինչ այդ հայտարարել էր Աժ էներգետիկ հանձնաժողովը. «Չենք բացառում, որ իրական թիվը բոլորովին այլ լինի...», ասաց նա:

Այսպանով չստացվեցին էներգետիկ ոլորտին առնչվող հարցերը. խոսվեց նաեւ վարկային չարաշահումների մասին ՊՇԷԿ-ի 5-րդ էներգաբլոկում: Ինչպես նշեց դատախազության քննչական վարչության պետ Պրն Միրզոյանը, 96 թ. այդ կապակցությամբ հարուցվել է քրեական գործ, որն այժմ դատարանում է: Մեղադրվող 7 պաշտոնյաները ենթարկվելու են քրեական պատասխանատվության՝ ՊՇԷԿ-ի շինարարության ընթացքում չհիմնավորված ծախսեր անելու համար (ի դեպ, այս պատմությունն էլ սկսվել ու կատարվել է Հրանտ Բագրատյանի վարչապետ լինելու օրոք): «Չհիմնավորված ծախսերը», սակայն, չափից դուրս մեղմ ձեւակերպում է, եթե հաշվի առնենք, որ խոսքը վերաբերում է վարկային զգալի յուրացումներին: Իմիջիայլոց, վարկային չարաշահումներին առնչվող մի քանի գործերի քննության ընթացքում պարզվել է, որ պետությանը հասցված վնասը կազմում է 250 մլն դրամ: Քննության ընթացքում ի հայտ է եկել եւս մի կարեւոր հանգամանք. եվրաբանկը՝ վերոնշյալ վարկերի տրամադրողը, խոչընդոտել է դատախազության աշխատանքին՝ պահանջելով դադարեցնել քննչական ստուգումները: Եվ ի վերջո, հասել է նպատակին: Հարց է ծագում՝ ի՞նչ իրավունքով: Թերեւս, սոսկ վարկատուի՞: Սա առաջին դեպքը չէ, որ միջազգային վարկատու կազմակերպություններն այստեղ պայմաններ են թելադրում՝ օգտվելով ֆինանսավորողի իրենց կարգավիճակից. սակայն վերոհիշյալը խոսակցության առանձին նյութ է: Տեղեկացնենք միայն, որ արդեն ստեղծված է եւ գործում է պետական մի կառույց՝ միջազգային պայմանագրերում մեր եւ օտարների միջեւ կնքված պարտավորությունները վերահսկող:

Փորք-ինչ՝ «Նաիրիտի» մասին

«Նաիրիտի» գործը վերջերս ասես մոռացության է մատնվել: Սակայն դատախազությունից հյուրերին հիշեցվեց, որ այդ քրեական գործին եւս անդրադառնան: Այսպիսով՝ իմացանք, որ գործի նախաքննությունն ավարտվել է 1 ամիս առաջ, սակայն այժմ արհեստականորեն ձգձգվում է մեղադրյալների կողմից՝ գործին ծանոթանալու պատրվակով: Դատախազությունն էլ, համբերությունը հատած, նրանց ժամանակ է տվել մինչեւ այս ամսի 11-ը: Մեղադրվող 2 պաշտոնյաների գործն ուղարկվելու է դատարան (նրանց անունները չնշվեցին քննիչների կողմից, փոխարենը նշվեցին գործին առնչվող եւ ներկայումս հետախուզման մեջ գտնվող մեկ այլ երկրի անունները՝ Հայկ Գեւորգյան եւ Արսեն Խաչատրյան): «Նաիրիտում» կատարված չարաշահումներից պետությանը հասցված վնասը կազմել է 5 մլն դոլար, բացի այդ՝ գործարանի տարածքում տեղակայված մի «ցեխում» թմբուկներ են արտադրել:

...Եվ վիճակախաղերի

Մեկ տասնյակը գերազանցող լոտոների ու այլեւայլ վիճակախաղերի վերաբերյալ դատախազությունը խիստ արտահայտվեց. «Բարեգործությամբ զբաղվելը ձեւակերպում են որպես մեծ ծախս եւ, ազատվում հարկեր վճարելուց», հեռուստալոտոների կազմակերպիչներին բնորոշեցին նրանք: Վիճակախաղային «մեքենայությունների» կապակցությամբ դատախազությունն արդեն 8 քրեական գործ է հարուցել, իսկ իր կարծիքը հետեւյալն է. «Այդ մարդիկ, առավել քան այլք, պարտավորություններ ունեն պետբյուջեի հանդեպ»:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 8 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562863, AT&T (3742) 151065,
e-mail: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՕՐԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Նյութերը չեն գրախոսվում ու չեն վերադարձվում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

Տեխնոհիդրային շրջանի Հայաստանի խորհրդարանի պատմության մեջ թերեւս գոյություն չունի այնպիսի երկարատեւ քննարկումների փուլ անցած եւ ավելի քան 500 առաջարկություններ ու դիտողություններ ստացած փաստաթուղթ, ինչպիսին «Արժեքթերի շուկայի կարգավորման մասին» օրենքն է: Օրինագծի շուրջ տարակարծությունների առիթ տվող հարցերը հիմնականում առնչվում էին արժեքթերի պետական հանձնաժողովի կազմավորմանը եւ բրոքերներին:

Արժեթղթերի շուկան կկարգավորվի, բայց կզարգանա՞

Առաջին հարցի վերաբերյալ առաջանում էր օրենսդրական փակուղի: Ըստ ներկայացված նախագծի, հանձնաժողովի նախագահին եւ ամբողջ կազմը նշանակում էր հանրապետության նախագահը: Ազգային ժողովում միայն լսվում եւ ի գիտություն էր ընդունվում հանձնաժողովի հաշվետվությունը: Հարցի նման դրվածքը չէր բավարարում խորհրդարանականներին, որոնք պնդում էին Ազգային ժողովի կողմից վերահսկողության լծակների՝ օրենքով ամրագրելու անհրաժեշտության մասին: Պատգամավորները, աչքի առաջ ունենալով ՀՀ էներգետիկ հանձնաժողովի իրենց վերահսկողությունից դուրս գործունեությունը, այս անգամ վճռական էին տրամադրված: Նրանց մոտեցման հետ համաձայն էին նաեւ փաստաթղթի հեղինակները, սակայն հանձնաժողովի նախագահի եւ կազմի նշանակմանը Ազգային ժողովի մասնակցությունն արգելում էր երկրի հիմնական օրենքը: Փոխզիջումային տարբերակների որոնումները շարունակվեցին մի քանի ամիս: Ի վերջո ելքը գտնվեց: Ինչպես տեղեկացանք ՀՀ արժեթղթերի տեսչության պետ Տիգրան Կարապետյանից, Ազգային ժողովը ստացավ երկու լուրջ լծակ հանձնաժողովի կազմավորման հարցում: Առաջինը՝ հանձնաժողովը յուրաքանչյուր տարի ներկայացնում է իր տարեկան գործունեության ծրագիրը (պետբյուջեի ներկայացման հետ, բայց հանձնաժողովի նախագահի կողմից), որը եթե չհաստատվի խորհրդարանում, ապա հանձնաժողովը լրիվ կազմով հրաժարական է տալու: Երկրորդ նման հնարավորությունն առկա է հանձնաժողովի տարեկան հաշվետվությունը չընդունելու դեպքում: Այսպիսով, կարելի է ասել, գտնվեց եւ գայլերը կուշտ, եւ ոչխարները ողջ պահելու տարբերակը: Հաջողվեց ապահովել խորհրդարանի մասնակցությունը հանձնաժողովի կազմավորման հարցում եւ խուսափել Սահմանադրությանը հակասող առաջարկներից: Արժեթղթերի տեսչության պետը նաեւ նշեց, որ օրենքը ուժի մեջ մտնելուց հետո (օգոստոսի 1-ին) լուծարվելու է իր գլխավորած տեսչությունը:

Այլ էր խնդիրը բրոքերներին վերաբերող գլխում: Հիշեցնենք, որ Հայաստանում ներկայումս գործում են 4 ֆոնդային բրոքերներ, որոնք, սակայն, ստեղծվել են որպես բաժնետիրական ընկերություններ: Փաստորեն, ի տարբերություն բրոքերների վերաբերյալ ախտահում ընդունված պատկերացումների եւ չափանիշների, համածայն որոնց բրոքերներն ընդամենն առեւտրային գործարքների կնքման վայր են եւ գործում են բրոքային մեկ անդամ մեկ ծայն սկզբունքով, մեզ մոտ դրանք ունեն ղեկավարներ, որոնք բրոքայի գործունեությունից շահույթ են ստանում: Բնական է, որ օրենսդրական կարգավորումն այստեղ ոչ բոլորին էր պիսով, կարելի է ասել, գտնվեց եւ գայլերը կուշտ, եւ ոչխարները ողջ պահելու տարբերակը: Հաջողվեց ապահովել խորհրդարանի մասնակցությունը հանձնաժողովի կազմավորման հարցում եւ խուսափել Սահմանադրությանը հակասող առաջարկներից: Արժեթղթերի տեսչության պետը նաեւ նշեց, որ օրենքը ուժի մեջ մտնելուց հետո (օգոստոսի 1-ին) լուծարվելու է իր գլխավորած տեսչությունը:

Այլ էր խնդիրը բրոքերներին վերաբերող գլխում: Հիշեցնենք, որ Հայաստանում ներկայումս գործում են 4 ֆոնդային բրոքերներ, որոնք, սակայն, ստեղծվել են որպես բաժնետիրական ընկերություններ: Փաստորեն, ի տարբերություն բրոքերների վերաբերյալ ախտահում ընդունված պատկերացումների եւ չափանիշների, համածայն որոնց բրոքերներն ընդամենն առեւտրային գործարքների կնքման վայր են եւ գործում են բրոքային մեկ անդամ մեկ ծայն սկզբունքով, մեզ մոտ դրանք ունեն ղեկավարներ, որոնք բրոքայի գործունեությունից շահույթ են ստանում: Բնական է, որ օրենսդրական կարգավորումն այստեղ ոչ բոլորին էր սում է ոչ թե բրոքային շահույթ ստանալ, այլ բրոքայում ախտաելով շահույթ ստանալ: Այսինքն՝ ԵՖԲ-ի լոբբիինգը այստեղ արդյունք չտվեց եւ օրենքի պահանջներին համապատասխան այս կառույցը եւս, ի թիվս արժեթղթերի շուկայում գործող բոլոր մասնագիտացված անձանց, պետք է վերալիցենզավորվի եւ գործի նոր սկզբունքով:

Այսպիսով, մենք արդեն ունենք «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» օրենք, սակայն պետք չէ այս պրոցեսում լուրջ առաջընթացի պատրանքներ տածել: Օրենքի ընդունումն ընդամենն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման էր կարգավորված եւ քաղաքակիրթ արժեթղթերի շուկայի ձեւավորման համար: Անգամ անհրաժեշտ ենթակառուցվածքների կայացումից հետո չի կարելի խոսել արժեթղթերի զարգացման շուկայի մասին, քանի դեռ Հայաստանի տնտեսությունը դժվարությամբ է շնչում, իսկ մասնավորեցված ձեռնարկությունների մեծ մասի արժեթղթերը դեռեւս ներդնողների համար գրավիչ եւ սակարկությունների ենթակա չեն:

ԱՐԹՈՒՐ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

Նպաստներով ոչ ընտանիք կպահես, ոչ էլ երկիր



«Մենք լուրջ ուսումնասիրություններ ենք կատարել եւ հանգել եզրակացության, որ նպաստներով աղքատությունը Հայաստանում չես վերացնի», երեկ Մամուլի ազգային ակումբի հյուրասրահում ասաց ՀՀ սոցիալական ապահովության նախարար Ռազմիկ Մարտիրոսյանը: Այս հանրահայտ ճշմարտությունը հայտնագործելով սոցապնախարարը որոշել է փոփոխել երկրիս սոցիալական քաղաքականությունը՝ նպաստներից դեպի զբաղվածություն, աշխատանքի ապահովում: Պրն Մարտիրոսյանը նշեց, որ այդ առումով նախարարության անվանման մեջ նույնիսկ պիտի լրացում կատարվի, ավելացվի աշխատանք բառը: Երկրաշարժից հետո, այնուհետեւ անկախության տարիներին Հայաստանն, ըստ Ռազմիկ Մարտիրոսյանի, հոգեբանորեն վերածվել է հումանիտար օգնության երկրի: Այնինչ, աշխատունակ մարդուն դրամ նվիրելուց առավել բարոյականն աշխատանք առաջարկելն է: Այնպես որ, չնայած ընտանեկան նպաստները միանգամից չեն վերանա, մոտեցումները կփոխվեն գործազրկության վերացման ուղղությամբ: Սոցապնախարարը խոսելիս անընդհատ վկայակոչում էր Շվեդիայի օրինակը: Շվեդիայի կառավարության կազմում գործող «Սիդա» ընկերության, Լիտվայի եւ Հայաստանի միջեւ փորձի փոխանակման ծրագիր գոյություն ունի, որի շրջանակներում փոխայցեր են տեղի ունենում, եւ Ռ. Մարտիրոսյանը սեփական տպավորություններն էր նկարագրում Շվեդիայից: Շվեդիայի ռազմավարությունն առավելագույնս խթանում է աշխատունակությունը եւ ոչ թե օգնություններ կամ նպաստներ սահմանում, նույնիսկ, եթե խոսքը վերաբերում է հաշմանդամներին:

Իհարկե, պրն Մարտիրոսյանն ընդունեց, որ ընտանեկան նպաստները մեզ մոտ ուշացումով են վճարվում, կենսաթոշակները՝ եւս: «Լուրջ ֆինանսական պրոբլեմներ կան, բայց մենք հավասարակշիռ եւ վճարունակ չենք զբաղվում: Մենք միայն այդ վճարումների քաղաքականության համար ենք պատասխանատու»: Սոցապնախարարը դժգոհեց, որ իրենք զրկված են վերահսկողական ծառայություններից, մինչդեռ չարաշահումներ եւս կան նպաստների պրոցեսում: Այնուամենայնիվ, պրն Մարտիրոսյանը հավաստեց, որ վարչապետը, կառավարությունն ամեն օր զբաղվում են այդ խնդիրներով: Բայց վճարումները հնարավոր կլինի ապահովել բյուջեի համապատասխան մուտքերի դեպքում միայն:

ԼԻԼԻԹ ԳԲԻԳՈՐՅԱՆ

Լոռու մարզի գրադարանները զրկվել են թերթերից ու ամսագրերից

«Հայմամուլի» Լոռու բաժանմունքի տնօրեն Ս. Քառյանից տեղեկացանք, որ Լոռու մարզի հանրապետական գրադարանն այս տարվա առաջին կիսամյակում ստացել է ընդամենը 30 անուն թերթ ու ամսագիր, սակայն պարտքը՝ 315 հազար դրամ, առ այսօր մարված չէ: Հուլիսի 1-ից հետո հրատարակված թերթերն ու ամսագրերը գրադարանն ընդհանրապես չի ստանում: ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության ենթակայության տակ գտնվող Լոռու մարզի հանրապետական գրադարանը, որին իր հերթին ենթարկվում են Սպիտակի, Ստեփանավանի, Տաշիրի եւ Ալավերդու գրադարանային համակարգերը, միջոցներ չունի տարվա երկրորդ կիսամյակում թերթեր ու ամսագրեր բաժանորդագրվելու: Փաստորեն, ընդամենը մեկ շաբաթ գրադարանի ընթերցասրահն անգործության է մատնվել: Հետաքրքիր է՝ նախարարությունը միայն լոռեցիների՞ն է այսպիսի վերաբերմունքի արժանացրել, թե՞ մյուս մարզերի նկատմամբ եւս կիրառվում է մայրաքաղաքային անտարբերության վաղուց «ճնություն բռնած» քաղաքականությունը: Պետք է հավի առնել, որ անկախ ամեն ինչից լոռեցիները նույնպես ընդվզել գիտեն:

ՄԱՆՎԵԼ ՄԻՔԱՅԵԱՆ

Վանաձոր

Առեւտրաարդյունաբերական պալատը գայլտոցի մեջ է

Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատի 50-60 աշխատակիցներ կանգնած են աշխատազուրկ դառնալու տհաճության առջեւ: Պատճառը մեկն է՝ դատավարական անհամաձայնեցված գործողություն:

Դեռեւս 1998 թ. հոկտեմբերի 15-ին Առեւտրաարդյունաբերական պալատի (ԱԱՊ) նախկին նախագահ Համլետ Հովհաննիսյանի եւ այդ հիմնարկության աշխատող Էդուարդ Սարգսյանի կողմից Հայագրոբանկի հետ կնքվել է վարկային պայմանագիր: Դրա համաձայն այս անձինք 205 հազար ԱՄՆ դոլար վարկ ստանալու համար գրավ էին դրել Սայաթ-Նովա 29/1 հասցեում գտնվող ԱԱՊ-ի սեփական շենքը: Գործարքը, սակայն, անօրինական էր: Դրա ամենաակտիվ մասնակիցը՝ Էդուարդ Սարգսյանը, այդ պահին արձակուրդի մեջ գտնվող նախագահի համաձայնությամբ օգտագործել էր «ՀՀ ԱԱՊ-ի նախագահության խորհրդի» ինչ-որ որոշում: Այդ կազմակերպության ներկայիս նախագահ պրն Շարբաթյանն այդ որոշումը անհիմն համարեց: Իրականում նախագահության որեւէ նիստ չի գումարվել, հետեւաբար ոչ մի նման որոշում կայացվել չէր կարող: Հիմնարկությունում, սակայն, գործարքից տեղյակ չեն եղել մինչեւ այն պահը, երբ մի օր նրանց Երեւանի Էրեբունու համայնքի առաջին ատյանի դատարանը հրավիրեց 3-րդ անձի կարգավիճակով մասնակցելու Հայագրոբանկի ներկայացրած հայցի հիման վրա սկսված դատավարությանը: Փաստորեն բանկը պահանջում էր բռնագանձել շորթված գումարն՝ առաջացած տոկոսների հետ. ընդհանուրը՝ 252038,43 ԱՄՆ դոլար, որը տարածվում էր պայմանագրում նշված շենքի վրա: ԱԱՊ-ը, որը գտնվում է ֆինանսական անմխիթար իրավիճակում, նման գումար, պարզ է, չուներ, բացի այդ, նշված գումարը հիմնարկությունը չէր տնօրինել, այլ ֆիզիկական անձինք, այնպես որ, նրանք հակընդդեմ հայցով դիմեցին այդ դատարանին: Ո՛ր, սակայն, չընդունվեց: Պատճառաբանությունը հստակ էր՝ ներկայացված եք 3-րդ անձի կարգավիճակով, ասել է թե՝ առանց ծայնի իրավունքի:

Այնուհետեւ, սկսած անցյալ տարվա նոյեմբերի 19-ից, ԱԱՊ-ը երեք անգամ բողոքով դիմել է վերաքննիչ դատարան, սակայն դրանք, ըստ պալատի ղեկավարության, օրինախախտումներով են վերադարձվել: Հիմնական պատճառաբանությունը պետական տուրքերի մուծումները չկատարելն էր: Նշենք, որ ԱԱՊ-ը պարտք է պետությանը 18 հազար ԱՄՆ դոլար:

Այդ ընթացքում Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների դատախազությունը որոշել է քրեական գործ հարուցել՝ ընկերության նախկին նախագահի եւ է. Սարգսյանի կողմից կեղծ փաստաթուղթ կազմելու եւ անօրեն ձեւով շենքը գրավ դնելու կապակցությամբ: Քննությունը, որ սկսվել է նախորդ տարվա նոյեմբերի 8-ից, դեռեւս շարունակվում է հայկական սցենարով. այդ մարդիկ հափշտակելով գումարը՝ հեռացել են երկրից: Նրանց մեղադրանք է առաջադրվել եւ հայտարարվել է հետախուզում: ԱԱՊ-ը կարծես թե ելքը գտել էր, սակայն այս պատմության անհեթեթ թվացող կուլմինացիան դեռ առջեւում էր: Հիմնարկությունը, հիմք ընդունելով դատախազության այս որոշումը, դիմեց Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան չարչրկվող գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջով: Այս դատարանը 2000 թ. մարտի 2-ին գործը կասեցրեց մինչեւ քրեական գործի ավարտը: Սակայն Հայագրոբանկն առաջնորդվում էր ոչ թե այս, այլ Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի վճռով եւ շարունակում իր պահանջները: ԱԱՊ-ը դիմեց նաեւ այս դատարանին, որը նորից մերժեց դիմումը հին պատճառաբանությամբ: Պրն Շարբաթյանն այս առումով ուշադրություն հրավիրեց դատավոր Կարինե Ղազարյանի կողմնակալ դիրքորոշմանը, որը Ագրոբանկից պահանջել է մուծել մոտ 4000 ԱՄՆ դոլար պետական տուրքը, օրենքով նախատեսվող 7500 դոլարի փոխարեն:

Հաջորդ քայլը վճռաբեկ դատարան դիմելն էր, որտեղ էլ հարցը վերջնական լուծում դարձյալ չստացավ: Եվ մինչ դատական քաշքշուկները շարունակվում են, Ագրոբանկն արդեն երրորդ անգամ աճուրդի է հանում շենքը՝ ընդ որում ամեն անգամ 20 տոկոսով իջեցնելով արժեքը: Ասել, թե բանկն անօրինական քայլերի է դիմում, սխալ կլիներ, քանի որ օգտվում է այն որոշումներից, որոնք ընդունում է դատարանը: Ողջ խնդիրն այստեղ դատարանների անտրամաբանական գործողությունների մեջ է: Փաստորեն, երկու դատարանները հիմնվում են միեւնույն քաղաքացիական օրենսդրության վրա եւ միանգամայն տարբեր, իրար ուղղակիորեն հակասող որոշումներ ընդունում: Մյուս կողմից, եթե հիմնվենք ԱԱՊ-ի ներկա նախագահ Շարբաթյանի խոսքերի վրա, մի դեպքում դատարանը պետական տուրքերը չմուծելու համար մերժում է դիմումը, իսկ մյուս դեպքում պարզապես ուշադրություն չի դարձնում դրան (խոսքն արդեն հիշատակված դատավոր Կ. Ղազարյանի գործողությունների մասին է): Այս գործում կա մեկ խնդիր եւս. Սպանդարյանի նոտարական գրասենյակը փաստորեն անտեսել է Առեւտրաարդյունաբերական պալատի կանոնադրությունը: Այլապես ինչպե՞ս կարելի է բացատրել, որ պայմանագիրն ստորագրած անդամներից մեկը՝ Ք. Արզումանյանը, ներկայացված է եղել՝ որպես այդ հիմնարկության քարտուղար, որն առնվազն թյուրիմացություն է մի պարզ պատճառով՝ ԱԱՊ կանոնադրությամբ քարտուղար նախատեսված չէ: Այս ամենում լուրջ հակասություններ կան, որոնք խանգարում ու խանգարելու են նորմալ դատավարական պրոցեսներին: Այս կազմակերպությունն արդեն իսկ ելքերն այլ ուղիներով է փնտրում: ԱԱՊ-ի ղեկավարությունը դիմում է հղել ՀՀ արդարադատության խորհրդի նախագահին, որը հանրապետության նախագահն է, օժանդակելու փակուղուց դուրս գալ: Նրանք լիահույս են, որ նախագահն անպայման կարձագանքի: Սակայն, եթե այս միջոցն էլ իրեն չարդարացնի, ԱԱՊ-ը հավանաբար կդիմի միջազգային դատարան: Այս ուղին, սակայն, նպատակավոր չէ կազմակերպության համար, քանի որ անպայման հեղինակության անկման հարց կառաջանա, առավել եւս որ ԱԱՊ-ն անդամակցում է միջազգային առեւտրաարդյունաբերական պալատին: Մյուս կողմից էլ չենք կարող չժխտել նաեւ, որ այս տարբերակն ակնհայտորեն հենց երկրի հեղինակության օգտին չի խոսելու:

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱԶԳ

Խմբագրական

Հայաստանը գոյություն ունի՞ իրոք

Դարշյալ արտաքին քաղաքականության մասին

Բաղաքակիրթ երկրների մամուլի, մյուս ՁԼՄ-ների եւ հասարակական կարծիքի ոլորտներում ասում են, թե այն իրադարձությունը կամ երկիրը, որի մասին չեն խոսում, փաստորեն գոյություն չունի: Դա վերստին կիրառելի է Հայաստանի դեպքում, որը, չնայած մեր ազգային հպարտությանը, մնում է անծանոթ երկիր, որի գոյության մասին արտաքին աշխարհը չգիտեն:

Հարցրեք միջին ամերիկացուն կամ ֆրանսիացուն, թե ինչ գիտե Հայաստանի մասին: Նա կպատասխանի, թե իրեն հայտնի չէ այդ երկրի տեղադրությունը կամ գոյության բուն փաստը: Դա կարող է մեզ ցնցել: Ինչպե՞ս թե... Մենք հայերս, ավելի քան երեքհազարամյա ազգ ենք, առաջինն ենք քրիստոնեությունն ընդունել իբրեւ պետական կրոն, ունենք մեր այբուբենը, լեզուն, հարուստ պատմությունը, բազմիցս նվաճվել, կոտրվել ենք, բայց գոյատեւել: Եվ մի՞թե այսօր անծանոթներ ենք աշխարհի համար: Իրականությունը հաճախ դժվար է մարսել:

Այս աշխարհում եւ ինտերնետի, հեռուստատեսության, հաղորդակցության եւ արբանյակի այս դարում մենք մյուս պետությունների համեմատությամբ, ավա՜ղ, այդ ասպարեզում մնացել ենք նախապատմական դարաշրջանում: Սա ոչ թե կարծիք է կամ խոհ, այլ կրկին աղացուցված տխուր իրողություն:

Հայաստանին շաս հազվադեպ է տեղ հատկացվում եվրոպական եւ մանավանդ ֆրանսիական գլխավոր լրատվամիջոցներում: Ղարաբաղի հակամարտությունն անգամ անհայտ է, քանզի 1991 թ. Պարսից ծոցի եւ ապա Հարավսլավիայի պատերազմները գերակշիռ տեղ գրաւեցին: Դարասկզբին եւ դրանից էլ առաջ բազմաթիվ երկրներ ընբռնեցին քարոզչության եւ տեղեկատվության արտաքին նշանակությունը: Ռազմավարական այդ ոլորտը, որ հնարեն գրաւեցնում են մեր թշնամիները եւ ուրիշ երկրներ, լիված է մեր սեփական ուժերի կողմից: Թեեւ կարողացանք ապացուցել, որ ռազմական առումով մեր բանակն ունակ է դիմադրելու եւ նույնիսկ հաղթանակներ տանելու, փոխարենը տեղեկատվության եւ օտարերկրյա քարոզչության ոլորտում տանուլ տվեցինք բազմաթիվ ճակատամարտեր, որոնցից վերջինը մի քանի օր առաջ էր:

Եվրոպայի եւ մանավանդ Ֆրանսիայի լրատվամիջոցների մեջ պետք է տարբերակել մամուլը, ռադիոն եւ հեռուստատեսությունը: Վերջինս մնում է տեղեկատվության գլխավոր միջոցը: Հեռուստատեսային լրատարերը չափազանց մեծ լսարան ունեն եւ ինտերնետի միջոցով ընդգրկում են 40 միլիոնից ավելի հեռուստադիտողներ, որ կազմում է Ֆրանսիայի բնակչության երկու երրորդը:

Ֆրանսիա կատարած այցելությունների ժամանակ ՀՀ նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը երբեք հեռուստաելույթ չի ունեցել, իրադարձությունն անգամ չի էլ լուսաբանվել: Դա մշտապես պայմանավորված է եղել այս ոլորտում մեր գիտակցության, պրոֆեսիոնալիզմի եւ աշխատանքի պակասով: Մեր տասնամյա ազատ ու անկախ պետությունը երբեք չի խորհել քարոզչության կամ արտաքին տեղեկատվության գերատեսչություն հիմնելու մասին: Վերջինս գոյություն ունի աշխարհի զարգեթ բոլոր երկրներում, բայց ոչ մեզ մոտ: Արտաքին տեսանելիությունը, մանավանդ Փարիզում, մեր զանազան դեսպանություններն զբաղվում են ամեն ինչով, բայց ոչ դրանով:

1991 թ.-ից (երբ առաջին անգամ այցելեցի Հայաստան) մինչեւ օրս տասնյակ անգամներ տագնապի ազդանշան եմ հնչեցրել եւ Հայաստանի ղեկավարների ուշադրությունը հրավիրել այդ արտաքին խնդրի վրա:

Թեեւ իմ ասածները մասամբ ունկնդրել են եւ հավանության արժանացրել, որեւէ ընթացք չի տրվել պահանջներիս, որոնք իրականում պահանջներ էլ չեն, քանզի մեր պարտականությունն են, ինչպես որ կարգին բանակ ունենալու պարտականությունը:

Կարելի է կարծել, թե մեր երկրի մասին տեղական լրատվամիջոցների ասածն ու գրածը հազար անգամ ավելի կարեւոր են, քան օտարերկրյա ՁԼՄ-ներինն ու հեռուստաալիքներինը:

Ֆրանսիայում ասում են, որ ամենավատ խուլը նա է, ով չի ուզում լսել: Բայց մինչեւ ե՞րբ ենք այս ասպարեզում մնալու ոչ միայն խուլ, այլեւ կույր ու համր:

Եթե Հայաստան-Ֆրանսիա երկկողմ կապերի առումով մի քանի օր առաջ Փարիզում տեղի ունեցած Քոչարյան-Շիրակ հանդիպումը բարի է, ապա տեղեկատվության եւ լուսաբանման առումով ծախողումից էլ վատ է:

Արդյունքը զրոյական է. անընդմեջ տեղեկատվություն սփռող 2 հեռուստաալիքները LCI-ն եւ «Եվրոնյուզը», ինչպես նաեւ մյուս 7 ազգային ու միջազգային ալիքները, որոնք մեր նախագահի այցի 2 օրերի ընթացքում ավելի քան 100 ժամ լուրեր հաղորդեցին, այդ 6000 րոպեներից ոչ մեկը չհատկացրին օտար պետության ղեկավարի Ֆրանսիա կատարած այցին: Ոչ թե Հայաստանը նրանց չի հետաքրքրում, այլ մենք ենք պարտավոր մեզ ներկայացնել, ինչպես արեցինք Հանովերի «Էքսպո-2000»-ում:

Այդուհանդերձ, 48 ժամ շարունակ մի մարդ Ֆրանսիայի լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում էր: Ցավոք, դա մեր նախագահը չէր: Խոսքը մի հասարակ գյուղացու մասին էր, որը ջարդուփշուր էր արել նոր կառուցվող «Մակդոնալդս» սրճարանը՝ իր արարքով բողոքելով հզոր Ամերիկայի պարտադրած համաշխարհային տնտեսական միասնացման դեմ: Դատավարության ընթացքում նրա փաստաբանը եւ բարեկամները ըստ երեւույթին առավել գործունյա եւ արհեստավարժ են եղել, քան նախագահ Քոչարյանի խորհրդականները, խոսնակը եւ հատկապես Փարիզում մեր դեսպանությունը:

Եթե մենք Հայաստանում ճոռոմախոսներ ենք մեր մամլո ասուլիսներում, ապա, ցավոք, քարոզության եւ արտաքին հանրության տեղեկատվության բնագավառում «փայլում» ենք մեր զրոյականությամբ եւ բացակայությամբ: Բայց ինչո՞ւ ֆրանսիական լրատվամիջոցներն արձագանքում են մյուս պետական ղեկավարների այցելություններին: Հայաստանի նախագահից հետո Ելիսեյան պալատում ընդունեցին Պաղեստինի նախագահ Յասեր Արաֆաթին: Ոչ մի լրատվամիջոց չմոռացավ հաղորդել այդ մասին: Այդ ինչի՞ց է, որ ֆրանսիական մամուլը մշտապես լայն տեղ է հատկացնում Մոզամբիկին, Անգոլային, Բուրկինա Ֆասոյին, Մալայզիային, Կոմորյան կղզիներին, Ինդոնեզիային կամ Աֆղանստանին:

Հավատա, սիրելի ընթերցող, Ֆրանսիայի նախագահի՝ մեր նախագահին ուղղած շողոմ ու գեղեցիկ խոսքերը լոկ գեղեցիկ խոսքեր են: Ճիշտ է, որ ժակ Շիրակը ճոռոմախոս է եւ մեծ շողոքորթ: Այդ նույն ժակ Շիրակն էր, որ, ինչպես անցյալ տարի «Կանալ պլյուս» հեռուստաալիքով հայտարարեց ֆրանսիացի պատգամավոր եւ Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի անդամ Ֆրանսուա Ռոբլուանը, սենատորներին կոչ էր արել մի կողմ դնել Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագիծը: Նույն հաղորդման ժամանակ Մարսելի քաղաքապետ եւ պատգամավոր Ժան-Կլոդ Գոդենը՝ նախագահի կուսակիցը, վիրավորվեց եւ վրդովվեց, որ չի ըմբռնում, թե ինչ կապ կա դարիս առաջին ցեղասպանության ընթացքում բնաջնջված մեկուկես միլիոն հայերի եւ Թուրքիային ֆրանսիական զենքի վաճառքի մի քանի հարյուր միլիոն դոլարանոց պայմանագրերի միջեւ: Շիրակի համար Հայաստանը կա եւ կմնա վերջին կարգի մտահոգություններից մեկը: Ներկայումս նրան ավելի շաս հետաքրքրում են Փարիզի քաղաքապետի ընտրությունը (այդ պաշտոնն ինքը զբաղեցրել է 15 տարուց ավելի) եւ առաջիկա նախագահական ընտրությունները:

Ինչ վերաբերում է մեզ, սփյուռքի եւ Հայաստանի հայերը, ղեկավարները, խորհրդականները եւ մամուլի աշխատողները պետք է իրերը տեսնեն այնպես, ինչպես դրանք կան: Այսօր մենք ի՞նչ գիտենք Բիրմայի մասին: Որտե՞ղ է այդ երկիրը, ո՞րն է մայրաքաղաքը, կրոնը, լեզուն, ինչպիսի՞ն է պատմությունը: Ճիշտն ասած, դա մեզ բնավ չի հետաքրքրում: Ֆրանսիական լրատվամիջոցները, լրագրողները կամ միջին ֆրանսիացին ճիշտ նույնպիսի անտարբերությամբ են վերաբերվում Հայաստանին:

Մենք է, որ պիտի աշխատենք այս ուղղությամբ, քանզի ուրիշները դա չեն անի մեր փոխարեն: Ճիշտ այնպես, ինչպես կարողացանք ազատագրել մեր գյուղերը, քաղաքները եւ վաղնջական հողերը Ղարաբաղում եւ այլուր, պետք է նաեւ կարողանանք մարտնչել, միջոցներ չխնայել, աշխատել ու տքնել միջազգային լրատվամիջոցներում գոնե նվազագույն տեղ գրաւեցնելու համար:

Գիտե՞ք արդյոք, որ ֆրանսիական հեռուստատեսությամբ ամենալայն դիտումների ժամերին կետրոպեանց գովազդի ցուցադրումն արժե 50 հազար դոլար: Մեր պետության օգտին հաջող գովազդի մի քանի րոպեն ամեն անգամ կարժենա ավելի քան 300 հազար դոլար: Մենք բաց ենք թողել տասնյակ առիթներ եւ արդեն տասնյակ միլիոնավոր դոլարներ կորցրել այս առումով: Այդուհանդերձ, նման ծախսեր կատարում են բոլոր պետությունները: Եվ եթե լավ մտածենք, քարոզչությունը տասնյակ միլիոնավոր դոլարների փոխարեն կարող ենք իրականացնել ընդամենը մի քանի հազարով:

Երբեք չեմ հասկանա այն դիրքորոշումը, երբ մտածում են, թե ծախսերը որեւէ կոնկրետ արդյունք չեն տալու:

Սովորենք տեսնել եւ մտածել հեռանկարով, ինչպես շուկայագիտության մեջ: Հայաստանին ծանոթացնելը նշանակում է այնտեղ ոչ միայն զարգացնել զբոսաշրջությունը, այլեւ տանալ ներդրումներ եւ օտարերկրյա խոշոր դրամագլուխներ, չէ որ դա է մեր ուզածը:

Օտար երկրների եւ դրանց լրատվամիջոցների հետ որեւէ պետության հանրային տեղեկատվության համաշխարհային տեղեկատվության համար դժվար է մարսել:

Այս աշխարհում եւ ինտերնետի, հեռուստատեսության, հաղորդակցության եւ արբանյակի այս դարում մենք մյուս պետությունների համեմատությամբ, ավա՜ղ, այդ ասպարեզում մնացել ենք նախապատմական դարաշրջանում: Սա ոչ թե կարծիք է կամ խոհ, այլ կրկին աղացուցված տխուր իրողություն:

Հայաստանին շաս հազվադեպ է տեղ հատկացվում եվրոպական եւ մանավանդ ֆրանսիական գլխավոր լրատվամիջոցներում: Ղարաբաղի հակամարտությունն անգամ անհայտ է, քանզի 1991 թ. Պարսից ծոցի եւ ապա Հարավսլավիայի պատերազմները գերակշիռ տեղ գրաւեցին: Դարասկզբին եւ դրանից էլ առաջ բազմաթիվ երկրներ ընբռնեցին քարոզչության եւ տեղեկատվության արտաքին նշանակությունը: Ռազմավարական այդ ոլորտը, որ հնարեն գրաւեցնում են մեր թշնամիները եւ ուրիշ երկրներ, լիված է մեր սեփական ուժերի կողմից: Թեեւ կարողացանք ապացուցել, որ ռազմական առումով մեր բանակն ունակ է դիմադրելու եւ նույնիսկ հաղթանակներ տանելու, փոխարենը տեղեկատվության եւ օտարերկրյա քարոզչության ոլորտում տանուլ տվեցինք բազմաթիվ ճակատամարտեր, որոնցից վերջինը մի քանի օր առաջ էր:

Եվրոպայի եւ մանավանդ Ֆրանսիայի լրատվամիջոցների մեջ պետք է տարբերակել մամուլը, ռադիոն եւ հեռուստատեսությունը: Վերջինս մնում է տեղեկատվության գլխավոր միջոցը: Հեռուստատեսային լրատարերը չափազանց մեծ լսարան ունեն եւ ինտերնետի միջոցով ընդգրկում են 40 միլիոնից ավելի հեռուստադիտողներ, որ կազմում է Ֆրանսիայի բնակչության երկու երրորդը:

Ֆրանսիա կատարած այցելությունների ժամանակ ՀՀ նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը երբեք հեռուստաելույթ չի ունեցել, իրադարձությունն անգամ չի էլ լուսաբանվել: Դա մշտապես պայմանավորված է եղել այս ոլորտում մեր գիտակցության, պրոֆեսիոնալիզմի եւ աշխատանքի պակասով: Մեր տասնամյա ազատ ու անկախ պետությունը երբեք չի խորհել քարոզչության կամ արտաքին տեղեկատվության գերատեսչություն հիմնելու մասին: Վերջինս գոյություն ունի աշխարհի զարգեթ բոլոր երկրներում, բայց ոչ մեզ մոտ: Արտաքին տեսանելիությունը, մանավանդ Փարիզում, մեր զանազան դեսպանություններն զբաղվում են ամեն ինչով, բայց ոչ դրանով:

1991 թ.-ից (երբ առաջին անգամ այցելեցի Հայաստան) մինչեւ օրս տասնյակ անգամներ տագնապի ազդանշան եմ հնչեցրել եւ Հայաստանի ղեկավարների ուշադրությունը հրավիրել այդ արտաքին խնդրի վրա:

Թեեւ իմ ասածները մասամբ ունկնդրել են եւ հավանության արժանացրել, որեւէ ընթացք չի տրվել պահանջներիս, որոնք իրականում պահանջներ էլ չեն, քանզի մեր պարտականությունն են, ինչպես որ կարգին բանակ ունենալու պարտականությունը:

Կարելի է կարծել, թե մեր երկրի մասին տեղական լրատվամիջոցների ասածն ու գրածը հազար անգամ ավելի կարեւոր են, քան օտարերկրյա ՁԼՄ-ներինն ու հեռուստաալիքներինը:

Ֆրանսիայում ասում են, որ ամենավատ խուլը նա է, ով չի ուզում լսել: Բայց մինչեւ ե՞րբ ենք այս ասպարեզում մնալու ոչ միայն խուլ, այլեւ կույր ու համր:

Եթե Հայաստան-Ֆրանսիա երկկողմ կապերի առումով մի քանի օր առաջ Փարիզում տեղի ունեցած Քոչարյան-Շիրակ հանդիպումը բարի է, ապա տեղեկատվության եւ լուսաբանման առումով ծախողումից էլ վատ է:

Արդյունքը զրոյական է. անընդմեջ տեղեկատվություն սփռող 2 հեռուստաալիքները LCI-ն եւ «Եվրոնյուզը», ինչպես նաեւ մյուս 7 ազգային ու միջազգային ալիքները, որոնք մեր նախագահի այցի 2 օրերի ընթացքում ավելի քան 100 ժամ լուրեր հաղորդեցին, այդ 6000 րոպեներից ոչ մեկը չհատկացրին օտար պետության ղեկավարի Ֆրանսիա կատարած այցին: Ոչ թե Հայաստանը նրանց չի հետաքրքրում, այլ մենք ենք պարտավոր մեզ ներկայացնել, ինչպես արեցինք Հանովերի «Էքսպո-2000»-ում:

Այդուհանդերձ, 48 ժամ շարունակ մի մարդ Ֆրանսիայի լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում էր: Ցավոք, դա մեր նախագահը չէր: Խոսքը մի հասարակ գյուղացու մասին էր, որը ջարդուփշուր էր արել նոր կառուցվող «Մակդոնալդս» սրճարանը՝ իր արարքով բողոքելով հզոր Ամերիկայի պարտադրած համաշխարհային տնտեսական միասնացման դեմ: Դատավարության ընթացքում նրա փաստաբանը եւ բարեկամները ըստ երեւույթին առավել գործունյա եւ արհեստավարժ են եղել, քան նախագահ Քոչարյանի խորհրդականները, խոսնակը եւ հատկապես Փարիզում մեր դեսպանությունը:

Եթե մենք Հայաստանում ճոռոմախոսներ ենք մեր մամլո ասուլիսներում, ապա, ցավոք, քարոզության եւ արտաքին հանրության տեղեկատվության բնագավառում «փայլում» ենք մեր զրոյականությամբ եւ բացակայությամբ: Բայց ինչո՞ւ ֆրանսիական լրատվամիջոցներն արձագանքում են մյուս պետական ղեկավարների այցելություններին: Հայաստանի նախագահից հետո Ելիսեյան պալատում ընդունեցին Պաղեստինի նախագահ Յասեր Արաֆաթին: Ոչ մի լրատվամիջոց չմոռացավ հաղորդել այդ մասին: Այդ ինչի՞ց է, որ ֆրանսիական մամուլը մշտապես լայն տեղ է հատկացնում Մոզամբիկին, Անգոլային, Բուրկինա Ֆասոյին, Մալայզիային, Կոմորյան կղզիներին, Ինդոնեզիային կամ Աֆղանստանին:

Հավատա, սիրելի ընթերցող, Ֆրանսիայի նախագահի՝ մեր նախագահին ուղղած շողոմ ու գեղեցիկ խոսքերը լոկ գեղեցիկ խոսքեր են: Ճիշտ է, որ ժակ Շիրակը ճոռոմախոս է եւ մեծ շողոքորթ: Այդ նույն ժակ Շիրակն էր, որ, ինչպես անցյալ տարի «Կանալ պլյուս» հեռուստաալիքով հայտարարեց ֆրանսիացի պատգամավոր եւ Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի անդամ Ֆրանսուա Ռոբլուանը, սենատորներին կոչ էր արել մի կողմ դնել Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագիծը: Նույն հաղորդման ժամանակ Մարսելի քաղաքապետ եւ պատգամավոր Ժան-Կլոդ Գոդենը՝ նախագահի կուսակիցը, վիրավորվեց եւ վրդովվեց, որ չի ըմբռնում, թե ինչ կապ կա դարիս առաջին ցեղասպանության ընթացքում բնաջնջված մեկուկես միլիոն հայերի եւ Թուրքիային ֆրանսիական զենքի վաճառքի մի քանի հարյուր միլիոն դոլարանոց պայմանագրերի միջեւ: Շիրակի համար Հայաստանը կա եւ կմնա վերջին կարգի մտահոգություններից մեկը: Ներկայումս նրան ավելի շաս հետաքրքրում են Փարիզի քաղաքապետի ընտրությունը (այդ պաշտոնն ինքը զբաղեցրել է 15 տարուց ավելի) եւ առաջիկա նախագահական ընտրությունները:

Ինչ վերաբերում է մեզ, սփյուռքի եւ Հայաստանի հայերը, ղեկավարները, խորհրդականները եւ մամուլի աշխատողները պետք է իրերը տեսնեն այնպես, ինչպես դրանք կան: Այսօր մենք ի՞նչ գիտենք Բիրմայի մասին: Որտե՞ղ է այդ երկիրը, ո՞րն է մայրաքաղաքը, կրոնը, լեզուն, ինչպիսի՞ն է պատմությունը: Ճիշտն ասած, դա մեզ բնավ չի հետաքրքրում: Ֆրանսիական լրատվամիջոցները, լրագրողները կամ միջին ֆրանսիացին ճիշտ նույնպիսի անտարբերությամբ են վերաբերվում Հայաստանին:

Մենք է, որ պիտի աշխատենք այս ուղղությամբ, քանզի ուրիշները դա չեն անի մեր փոխարեն: Ճիշտ այնպես, ինչպես կարողացանք ազատագրել մեր գյուղերը, քաղաքները եւ վաղնջական հողերը Ղարաբաղում եւ այլուր, պետք է նաեւ կարողանանք մարտնչել, միջոցներ չխնայել, աշխատել ու տքնել միջազգային լրատվամիջոցներում գոնե նվազագույն տեղ գրաւեցնելու համար:

Գիտե՞ք արդյոք, որ ֆրանսիական հեռուստատեսությամբ ամենալայն դիտումների ժամերին կետրոպեանց գովազդի ցուցադրումն արժե 50 հազար դոլար: Մեր պետության օգտին հաջող գովազդի մի քանի րոպեն ամեն անգամ կարժենա ավելի քան 300 հազար դոլար: Մենք բաց ենք թողել տասնյակ առիթներ եւ արդեն տասնյակ միլիոնավոր դոլարներ կորցրել այս առումով: Այդուհանդերձ, նման ծախսեր կատարում են բոլոր պետությունները: Եվ եթե լավ մտածենք, քարոզչությունը տասնյակ միլիոնավոր դոլարների փոխարեն կարող ենք իրականացնել ընդամենը մի քանի հազարով:

Երբեք չեմ հասկանա այն դիրքորոշումը, երբ մտածում են, թե ծախսերը որեւէ կոնկրետ արդյունք չեն տալու:

Սովորենք տեսնել եւ մտածել հեռանկարով, ինչպես շուկայագիտության մեջ: Հայաստանին ծանոթացնելը նշանակում է այնտեղ ոչ միայն զարգացնել զբոսաշրջությունը, այլեւ տանալ ներդրումներ եւ օտարերկրյա խոշոր դրամագլուխներ, չէ որ դա է մեր ուզածը:

Օտար երկրների եւ դրանց լրատվամիջոցների հետ որեւէ պետության հանրային տեղեկատվության համաշխարհային տեղեկատվության համար դժվար է մարսել:

Այս աշխարհում եւ ինտերնետի, հեռուստատեսության, հաղորդակցության եւ արբանյակի այս դարում մենք մյուս պետությունների համեմատությամբ, ավա՜ղ, այդ ասպարեզում մնացել ենք նախապատմական դարաշրջանում: Սա ոչ թե կարծիք է կամ խոհ, այլ կրկին աղացուցված տխուր իրողություն:

Հայաստանին շաս հազվադեպ է տեղ հատկացվում եվրոպական եւ մանավանդ ֆրանսիական գլխավոր լրատվամիջոցներում: Ղարաբաղի հակամարտությունն անգամ անհայտ է, քանզի 1991 թ. Պարսից ծոցի եւ ապա Հարավսլավիայի պատերազմները գերակշիռ տեղ գրաւեցին: Դարասկզբին եւ դրանից էլ առաջ բազմաթիվ երկրներ ընբռնեցին քարոզչության եւ տեղեկատվության արտաքին նշանակությունը: Ռազմավարական այդ ոլորտը, որ հնարեն գրաւեցնում են մեր թշնամիները եւ ուրիշ երկրներ, լիված է մեր սեփական ուժերի կողմից: Թեեւ կարողացանք ապացուցել, որ ռազմական առումով մեր բանակն ունակ է դիմադրելու եւ նույնիսկ հաղթանակներ տանելու, փոխարենը տեղեկատվության եւ օտարերկրյա քարոզչության ոլորտում տանուլ տվեցինք բազմաթիվ ճակատամարտեր, որոնցից վերջինը մի քանի օր առաջ էր:

Եվրոպայի եւ մանավանդ Ֆրանսիայի լրատվամիջոցների մեջ պետք է տարբերակել մամուլը, ռադիոն եւ հեռուստատեսությունը: Վերջինս մնում է տեղեկատվության գլխավոր միջոցը: Հեռուստատեսային լրատարերը չափազանց մեծ լսարան ունեն եւ ինտերնետի միջոցով ընդգրկում են 40 միլիոնից ավելի հեռուստադիտողներ, որ կազմում է Ֆրանսիայի բնակչության երկու երրորդը:

Ֆրանսիա կատարած այցելությունների ժամանակ ՀՀ նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը երբեք հեռուստաելույթ չի ունեցել, իրադարձությունն անգամ չի էլ լուսաբանվել: Դա մշտապես պայմանավորված է եղել այս ոլորտում մեր գիտակցության, պրոֆեսիոնալիզմի եւ աշխատանքի պակասով: Մեր տասնամյա ազատ ու անկախ պետությունը երբեք չի խորհել քարոզչության կամ արտաքին տեղեկատվության գերատեսչություն հիմնելու մասին: Վերջինս գոյություն ունի աշխարհի զարգեթ բոլոր երկրներում, բայց ոչ մեզ մոտ: Արտաքին տեսանելիությունը, մանավանդ Փարիզում, մեր զանազան դեսպանություններն զբաղվում են ամեն ինչով, բայց ոչ դրանով:

1991 թ.-ից (երբ առաջին անգամ այցելեցի Հայաստան) մինչեւ օրս տասնյակ անգամներ տագնապի ազդանշան եմ հնչեցրել եւ Հայաստանի ղեկավարների ուշադրությունը հրավիրել այդ արտաքին խնդրի վրա:

Թեեւ իմ ասածները մասամբ ունկնդրել են եւ հավանության արժանացրել, որեւէ ընթացք չի տրվել պահանջներիս, որոնք իրականում պահանջներ էլ չեն, քանզի մեր պարտականությունն են, ինչպես որ կարգին բանակ ունենալու պարտականությունը:

Կարելի է կարծել, թե մեր երկրի մասին տեղական լրատվամիջոցների ասածն ու գրածը հազար անգամ ավելի կարեւոր են, քան օտարերկրյա ՁԼՄ-ներինն ու հեռուստաալիքներինը:

Ֆրանսիայում ասում են, որ ամենավատ խուլը նա է, ով չի ուզում լսել: Բայց մինչեւ ե՞րբ ենք այս ասպարեզում մնալու ոչ միայն խուլ, այլեւ կույր ու համր:

Եթե Հայաստան-Ֆրանսիա երկկողմ կապերի առումով մի քանի օր առաջ Փարիզում տեղի ունեցած Քոչարյան-Շիրակ հանդիպումը բարի է, ապա տեղեկատվության եւ լուսաբանման առումով ծախողումից էլ վատ է:

Արդյունքը զրոյական է. անընդմեջ տեղեկատվություն սփռող 2 հեռուստաալիքները LCI-ն եւ «Եվրոնյուզը», ինչպես նաեւ մյուս 7 ազգային ու միջազգային ալիքները, որոնք մեր նախագահի այցի 2 օրերի ընթացքում ավելի քան 100 ժամ լուրեր հաղորդեցին, այդ 6000 րոպեներից ոչ մեկը չհատկացրին օտար պետության ղեկավարի Ֆրանսիա կատարած այցին: Ոչ թե Հայաստանը նրանց չի հետաքրքրում, այլ մենք ենք պարտավոր մեզ ներկայացնել, ինչպես արեցինք Հանովերի «Էքսպո-2000»-ում:

Այդուհանդերձ, 48 ժամ շարունակ մի մարդ Ֆրանսիայի լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում էր: Ցավոք, դա մեր նախագահը չէր: Խոսքը մի հասարակ գյուղացու մասին էր, որը ջարդուփշուր էր արել նոր կառուցվող «Մակդոնալդս» սրճարանը՝ իր արարքով բողոքելով հզոր Ամերիկայի պարտադրած համաշխարհային տնտեսական միասնացման դեմ: Դատավարության ընթացքում նրա փաստաբանը եւ բարեկամները ըստ երեւույթին առավել գործունյա եւ արհեստավարժ են եղել, քան նախագահ Քոչարյանի խորհրդականները, խոսնակը եւ հատկապես Փարիզում մեր դեսպանությունը:

Եթե մենք Հայաստանում ճոռոմախոսներ ենք մեր մամլո ասուլիսներում, ապա, ցավոք, քարոզության եւ արտաքին հանրության տեղեկատվության բնագավառում «փայլում» ենք մեր զրոյականությամբ եւ բացակայությամբ: Բայց ինչո՞ւ ֆրանսիական լրատվամիջոցներն արձագանքում են մյուս պետական ղեկավարների այցելություններին: Հայաստանի նախագահից հետո Ելիսեյան պալատում ընդունեցին Պաղեստինի նախագահ Յասեր Արաֆաթին: Ոչ մի լրատվամիջոց չմոռացավ հաղորդել այդ մասին: Այդ ինչի՞ց է, որ ֆրանսիական մամուլը մշտապես լայն տեղ է հատկացնում Մոզամբիկին, Անգոլային, Բուրկինա Ֆասոյին, Մալայզիային, Կոմորյան կղզիներին, Ինդոնեզիային կամ Աֆղանստանին:

Հավատա, սիրելի ընթերցող, Ֆրանսիայի նախագահի՝ մեր նախագահին ուղղած շողոմ ու գեղեցիկ խոսքերը լոկ գեղեցիկ խոսքեր են: Ճիշտ է, որ ժակ Շիրակը ճոռոմախոս է եւ մեծ շողոքորթ: Այդ նույն ժակ Շիրակն էր, որ, ինչպես անցյալ տարի «Կանալ պլյուս» հեռուստաալիքով հայտարարեց ֆրանսիացի պատգամավոր եւ Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի անդամ Ֆրանսուա Ռոբլուանը, սենատորներին կոչ էր արել մի կողմ դնել Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագիծը: Նույն հաղորդման ժամանակ Մարսելի քաղաքապետ եւ պատգամավոր Ժան-Կլոդ Գոդենը՝ նախագահի կուսակիցը, վիրավորվեց եւ վրդովվեց, որ չի ըմբռնում, թե ինչ կապ կա դարիս առաջին ցեղասպանության ընթացքում բնաջնջված մեկուկես միլիոն հայերի եւ Թուրքիային ֆրանսիական զենքի վաճառքի մի քանի հարյուր միլիոն դոլարանոց պայմանագրերի միջեւ: Շիրակի համար Հայաստանը կա եւ կմնա վերջին կարգի մտահոգություններից մեկը: Ներկայումս նրան ավելի շաս հետաքրքրում են Փարիզի քաղաքապետի ընտրությունը (այդ պաշտոնն ինքը զբաղեցրել է 15 տարուց ավելի) եւ առաջիկա նախագահական ընտրությունները:

Ինչ վերաբերում է մեզ, սփյուռքի եւ Հայաստանի հայերը, ղեկավարները, խորհրդականները եւ մամուլի աշխատողները պետք է իրերը տեսնեն այնպես, ինչպես դրանք կան: Այսօր մենք ի՞նչ գիտենք Բիրմայի մասին: Որտե՞ղ է այդ երկիրը, ո՞րն է մայրաքաղաքը, կրոնը, լեզուն, ինչպիսի՞ն է պատմությունը: Ճիշտն ասած, դա մեզ բնավ չի հետաքրքրում: Ֆրանսիական լրատվամիջոցները, լրագրողները կամ միջին ֆրանսիացին ճիշտ նույնպիսի անտարբերությամբ են վերաբերվում Հայաստանին:

Մենք է, որ պիտի աշխատենք այս ուղղությամբ, քանզի ուրիշները դա չեն անի մեր փոխարեն: Ճիշտ այնպես, ինչպես կարողացանք ազատագրել մեր գյուղերը, քաղաքները եւ վաղնջական հողերը Ղարաբաղում եւ այլուր, պետք է նաեւ կարողանանք մարտնչել, միջոցներ չխնայել, աշխատել ու տքնել միջազգային լրատվամիջոցներում գոնե նվազագույն տեղ գրաւեցնելու համար:

Գիտե՞ք արդյոք, որ ֆրանսիական հեռուստատեսությամբ ամենալայն դիտումների ժամերին կետրոպեանց գովազդի ցուցադրումն արժե 50 հազար դոլար: Մեր պետության օգտին հաջող գովազդի մի քանի րոպեն ամեն անգամ կարժենա ավելի քան 300 հազար դոլար: Մենք բաց ենք թողել տասնյակ առիթներ եւ արդեն տասնյակ միլիոնավոր դոլարներ կորցրել այս առումով: Այդուհանդերձ, նման ծախսեր կատարում են բոլոր պետությունները: Եվ եթե լավ մտածենք, քարոզչությունը տասնյակ միլիոնավոր դոլարների փոխարեն կարող ենք իրականացնել ընդամենը մի քանի հազարով:

Երբեք չեմ հասկանա այն դիրքորոշումը, երբ մտածում են, թե ծախսերը որեւէ կոնկրետ արդյունք չեն տալու:

Սովորենք տեսնել եւ մտածել հեռանկարով, ինչպես շուկայագիտության մեջ: Հայաստանին ծանոթացնելը նշանակում է այնտեղ ոչ միայն զարգացնել զբոսաշրջությունը, այլեւ տանալ ներդրումներ եւ օտարերկրյա խոշոր դրամագլուխներ, չէ որ դա է մեր ուզածը:

Օտար երկրների եւ դրանց լրատվամիջոցների հետ որեւէ պետության հանրային տեղեկատվության համա-

Թբիլիսյան էսքիզներ. Խոջիվանքի կարոտը

Տարածաշրջանային սեմինարի առիթով Վրաստանի մայրաքաղաքում գտնվող ՀՀ սահմանադրական դատարանի պատվիրակության համար մշակված էր նաեւ Թբիլիսի քաղաքին ծանոթանալու ծրագիր: Վրաց գործընկերներն այցելություններ էին նախատեսել մի շարք թանգարաններ եւ տեսարժան վայրեր: Դրանցում հայկական եկեղեցիներն ու Խոջիվանքի գերեզմանոցը չէին նշված: Միտումնավոր որեւէ բան չկար, պարզապես վրացիներն ուզում էին իրենց մշակութային օջախներին ծանոթացնել, մանավանդ որ այցելությունները կայանալու էին Ադրբեջանի սահմանադրական դատարանի պատվիրակության հետ համատեղ:

Պատմության թանգարան համատեղ այցից հետո մենք խնդրեցինք առանձնանալ՝ Խոջիվանքի գերեզմանոց մեկնելու համար: Այս բնական ցանկությունը սիրով ընդունվեց, բայց մեր խմբի ուղեկցողին ծանոթ չէր այդ վայրը: Դրությունը փրկեց ՀՀ ՍԴ աշխատակազմի ղեկավար Առուշան Հակոբյանը, որը քաջածանոթ է Թբիլիսիին եւ հրաշալի խոսում, գրում ու կարդում է վրացերեն:

Հավելաբարի ծուռ ու մուռ, «հազար տարի» չնորոգված փողոցներով հասանք Խոջիվանք եւ տարիների բացակայությունից հետո հայրական տուն դարձող որդու զգացողությամբ մտանք այդ փոքրիկ գերեզմանոցը, ուր հանգչում են մեր գրականության եւ մշակույթի մեծերից շատերը: Տխուր մի պատկեր էր՝ անխնամ տարածք, պոկված տիտղոսասալիկներով, հողին հավասարվող տապանաքարեր, անհայտության դատապարտվող գերեզմանոց: Պահապանի դերն իր վրա վերցրած մի կին՝ Զինա Գեւորգյանը, մեր այցից հուզված, բոլորիս մեկ-մեկ բարեւեց, հաստատեց տեղեկացնել, որ ինքը մենակ է եւ այստեղ, եւ տանը, որտեղից հարազատները մեկնել են՝ ում աչքը ուր կտրի: Հետո, երբ իմացավ մեր ով լինելը, իր կյանքի պատմություններին խառնեց աշխարհի գանգատը՝ աշխատավարձ չստանալուց մինչեւ «մի ցախավել անգամ չունենալը»: Վլադիմիր Հովհաննիսյանը գումար դրեց նրա մաշված խալաթի գրպանը, այդ բանը կրկնեց Վալերի Պողոսյանը, եւ կինը կամաց-կամաց վերագտավ իրեն՝ երեւի մտքում հաշվելով, թե վաղը ե՛ւ ցախավելը կունենա, ե՛ւ արդեն մեկ-երկու ամսվա աշխատավարձն է ձեռքին: Քանդվող, ջարդվող սալիկների մասին սկսեց պատմել կատարված ու անդառնալի փա

ԱԶԳ

Միջազգային

20-րդ դարի առաջին ցեղասպանությունը 85 տարի անց էլ շարունակում է մնալ Թուրքիայի պատմության ամենաարգելված էջերից մեկը: Դա ոչ միայն պաշտոնական Թուրքիայի տեսակետն է, որն արտահայտվեց 1999 թ. հայ-թուրքական սահմանից ոչ հեռու կառուցված հուշարձանի միջոցով: Հուշարձանը նույնիսկ շատ հեռվից է նկատելի եւ կառուցված է «հայերի ձեռքերով զոհված թուրքերի» հիշատակին: Ցավալի է, որ դրան հավատում են նաեւ շատ թուրք մտավորականներ եւ ազդեցիկ գիտնականներ: Մատների վրա կարելի է հաշվել այն թուրքերին, որոնք պահանջում են կատարվածի օբյեկտիվ գնահատականը եւ հայերից ներողություն են

– Մեր նպատակը ադաղուցելն է, որ մարդկությունը չոչեսֆ է հաշտվի ցեղասպանության հետ: Ցեղասպանությունն ամենամեծ չարիքն է, որ մարդիկ գործում են մարդկանց դեմ, հանցագործություն, որը բացառապես ազգային եւ կրոնական դրդապատճառներ ունի: Մենք պատմական արդարություն ենք պահանջում, անում ենք այն, ինչը ճիշտ է: Եթե շարունակենք ժխտել պատմական իրողությունը, ի վերջո կհասնենք մարդկայնության ժխտմանը եւ չենք կարող մեր պարտքը ադաղա սերունդների առաջ: Մեր կազմակերպությունը բաց է բոլորին, ում գիտակցությունը թույլ չի տալիս խղճի վրա այսպիսի բեռ ունենալ, խոսքը հատկապես հետաքրքրական ու պատասխանատու հանդիպումներում, որոնք անցան ջերմ մթնոլորտում, աննախադեպ հնարավորություն ունեցանք մեր ծրագրերի մասին խոսելու եւ մտքեր փոխանակելու: Շատ հետաքրքրական հարցեր էին տալիս. ո՞վ է ֆինանսավորում ձեր գործունեությունը, ինչո՞ւ հետաքրքրվեցիք եւ նվիրվեցիք եղեռնի ուսումնասիրությանը, չե՞ք վախենում Թուրքիայից, արդյոք այնտեղ կլուսաբանե՞ն ձեր այցելությունը, ո՞ր ուժերի օժանդակությունն եք վայելում: Փորձում էինք պատասխանել այնքան մանրամասն, որքան հնարավոր էր, նաեւ նշելով մեր թույլ կողմերը՝ փոքրաթիվ լինելը, եղեռնի մասին շատ բան չիմանալը եւ այլն: Հայաստանում բոլորը՝ պատասխանատու պաշտոնյայից մինչեւ հասարակ քաղաքացին հարգում էին մեր ջանքերը: Այստեղ ուզում եմ մի բան նշել. պատմության խորը գիտակցությամբ օժտված հայ մարդու սրտում ցեղասպանությունը ճանաչող եւ խղճի խայթ զգացող անձի հանդեպ ատելություն ու վրիժառություն չկա:

– Ի՞նչ դրական դեր կարող են խաղալ Գերմանիան ու Գերմանիայում ապրող թուրքերը եղեռնի ճանաչման գործում:

– Այսօր Գերմանիայում ապրող եւ աշխատող թուրքերն իրենք են զգում ազգային խտրականության դառն հետեւանքները եւ սկսում են հասկանալ, թե ինչ է նշանակում ազգային փոքրամասնություն: Գերմանիան կարող էր դրական դեր խաղալ եղեռնի ճանաչման գործում, քանի որ նրա վարկը գրեթե չի տուժել հրեաների հանդեպ հանցագործության ընդունումից եւ ընդհակառակը, ավելի է բարձրացել: Եվ սակայն անըմբռնելի է, թե ինչու է Գերմանիայի ազդեցությունը շարունակում բացասական մնալ:

– Հնարավո՞ր է եղեռնի դեմ կազմակերպություն հիմնել Թուրքիայում: Եթե ոչ, ապա ի՞նչը կխանգարի:

– Թուրքիայում մարդու իրավունքների համար պայքարող յուրաքանչյուր նախաձեռնող խումբ վտանգի է ենթարկում կյանքը: «Թուրքիայում մարդու իրավունքների պաշտպանության» կազմակերպությունը դրա օրինակն է: Նրա 17 անդամներ իրենց կյանքով են վճարել քաջության համար, սակայն խումբը շարունակում է գործել: Թուրքիայում հնարավոր չէ «Միություն ընդդեմ ցեղասպանության» անունով ընկերություն հիմնել, սակայն առաջխաղացում, այնուամենայնիվ, նկատվում է: Մենք ջերմ հարաբերություններ ունենք Թուրքիայի ՄԻՊ-ի անդամների հետ եւ միասին ջանում ենք անել հնարավորը եղեռնի ճանաչումը արագացնելու համար:

AIM-ից թարգմանեց
ՈՍԿԱՆ ԱԶԻՉՅԱՆԸ

Երկար ճանապարհ դեպի Երեւան

Հարցազրույց «Մարդիկ ընդդեմ ցեղասպանության» ընկերակցության նախագահ Ալի Էրթեմի հետ

խնդրում անցյալի չարագործությունների համար: Այս տեսանկյունից եզակի եւ հարգանքի արժանի են «Միություն ընդդեմ ցեղասպանության» ընկերակցության ջանքերը: 1998-ից ի վեր կազմակերպությունը եղեռնի ճանաչման օգտին 11.000 ստորագրություն է հավաքել, որոնցից 10.000-ը պատկանում է Թուրքիայի քաղաքացիներին:

Թեսա Հոֆման- Մինչեւ այսօր, չնայած անժխտելի փաստերին, ոչ միայն Թուրքիայի կառավարությունը, այլեւ թուրք գիտնականներն ու մտավորականներն են ժխտում, որ ցեղասպանությունը երբեւէ տեղի է ունեցել: Ի՞նչ ազդեցություն է թողել «հայկական տաբուն», ինչպես անվանում է երեւույթը Իվ Թերնոնը, թուրք հասարակ ժողովրդի վրա:

Ալի Էրթեմ- Եղեռնը, այժմ էլ դրա ժխտումը, շարունակում է թուրք հասարակության վրա քայքայիչ ազդեցություն ունենալ: Պատմական փաստերը անխղճորեն խեղաթյուրելով ժողովրդին հազիվ թե համոզեն, որ Թուրքիայի բնակչության 2/3-ը պարզապես սպանվել է: Երբ անտարբերության են մատնում բարոյական նորմերը, կեղծիքն ու դաժանությունը սկսում են հարգվել: Թուրք մարդը վախով ու սարսափով է նայում իր պետությանը, իսկ նրանց, ովքեր ազգությամբ թուրք չեն՝ քրդերին, արաբներին, լազերին, չերքեզներին եւ այլոց, սպիտում են հպարտանալ իրենց թուրքահպատակության համար: Ռասիզմն ու կրոնական խտրականությունը օրվա պահանջ են: Թուրքերին ի ծնե դաստիարակում են այսպես. մենք շրջապատված ենք թշնամիներով եւ ըստ ասացվածքի՝ «մեզանից բացի բարեկամներ չունենք»: Անարդարության կարելի է հանդիպել ամեն քայլափոխի, այսինքն Թուրքիայում մարդու իրավունքների անդադար ոտնահարումը եղեռնը չընդունելու արդյունք է:

– Ո՞րն է գլխավոր նպատակը, որին միտված է 1998-ին հիմնադրված ձեր կազմակերպության գործունեությունը:



պես վերաբերում է թուրքերին եւ այն ազգերին, որոնք գործիք են ծառայել երիտթուրքերի ձեռքին: Իհարկե, եղեռնի տաբուն հաղթահարելը մեզանից ուժ ու նվիրում է պահանջում:

– 1999 թ. ապրիլին ձեր կազմակերպության 11 անդամներ եղան Երեւանում՝ հայերի հետ կողք-կողքի հարգելու եղեռնի զոհերի հիշատակը: Սա առաջին դեպքն է, երբ թուրքերն ու քրդերը Հայաստան են ժամանել այդ նպատակով: Ի՞նչ զգացումներ ապրեցիք դուք եւ ձեր ընկերները եւ ինչպիսի՞ ընդունելության արժանացաք:

– Ցանկանում եմ օգտագործել համապատասխան առիթը իմ հայ ընկերներին ջերմագին շնորհակալություն հայտնելու համար: Նրանք շատ ջանք թափեցին, որ մեր այցելությունը հաջող անցնի: Վստահ կարող եմ ասել, որ կատարեցինք մեր առաջ դրված բոլոր ծրագրերը: Մեզ ջերմությամբ շրջապատեցին առաջին իսկ օրվանից: Հայ մամուլը լայնորեն լուսաբանեց մեր այցելությունը, նույնիսկ Հայաստանի սահմաններից դուրս իմացան: Մեր կարճ այցելությունը շատ օգտակար եղավ: Բազմանում բոլորը՝ պատասխանատու պաշտոնյայից մինչեւ հասարակ քաղաքացին հարգում էին մեր ջանքերը: Այստեղ ուզում եմ մի բան նշել. պատմության խորը գիտակցությամբ օժտված հայ մարդու սրտում ցեղասպանությունը ճանաչող եւ խղճի խայթ զգացող անձի հանդեպ ատելություն ու վրիժառություն չկա:

– Ի՞նչ դրական դեր կարող են խաղալ Գերմանիան ու Գերմանիայում ապրող թուրքերը եղեռնի ճանաչման գործում:

– Այսօր Գերմանիայում ապրող եւ աշխատող թուրքերն իրենք են զգում ազգային խտրականության դառն հետեւանքները եւ սկսում են հասկանալ, թե ինչ է նշանակում ազգային փոքրամասնություն: Գերմանիան կարող էր դրական դեր խաղալ եղեռնի ճանաչման գործում, քանի որ նրա վարկը գրեթե չի տուժել հրեաների հանդեպ հանցագործության ընդունումից եւ ընդհակառակը, ավելի է բարձրացել: Եվ սակայն անըմբռնելի է, թե ինչու է Գերմանիայի ազդեցությունը շարունակում բացասական մնալ:

– Հնարավո՞ր է եղեռնի դեմ կազմակերպություն հիմնել Թուրքիայում: Եթե ոչ, ապա ի՞նչը կխանգարի:

– Թուրքիայում մարդու իրավունքների համար պայքարող յուրաքանչյուր նախաձեռնող խումբ վտանգի է ենթարկում կյանքը: «Թուրքիայում մարդու իրավունքների պաշտպանության» կազմակերպությունը դրա օրինակն է: Նրա 17 անդամներ իրենց կյանքով են վճարել քաջության համար, սակայն խումբը շարունակում է գործել: Թուրքիայում հնարավոր չէ «Միություն ընդդեմ ցեղասպանության» անունով ընկերություն հիմնել, սակայն առաջխաղացում, այնուամենայնիվ, նկատվում է: Մենք ջերմ հարաբերություններ ունենք Թուրքիայի ՄԻՊ-ի անդամների հետ եւ միասին ջանում ենք անել հնարավորը եղեռնի ճանաչումը արագացնելու համար:

AIM-ից թարգմանեց
ՈՍԿԱՆ ԱԶԻՉՅԱՆԸ

Անօրինական գաղթականներ

Ովքե՞ր են, ո՞ւր են գնում

Վերջերս Մեծ Բրիտանիա հասնելու ճանապարհին 58 չինացիների շնչահեղձ լինելու դեպքը մեծ աղմուկ բարձրացրեց աշխարհում եւ ստիպեց, որ միջազգային մամուլն առավել սերտորեն ուսումնասիրություն դարձնի անօրինական գաղթականության խնդրին: Ժամանակ գործող միջկառավարական գործակալության՝ Գաղթականության միջազգային կազմակերպության տվյալների հիման վրա «Սայփրս Ուիքլի» շաբաթաթերթն իր հունիսի 23-29-ի համարում հետաքրքիր տեղեկություններ է ներկայացնում, որտեղից թարգմանաբար քաղվածները հանձնում ենք մեր ընթերցողների ուշադրությանը.

«Աշխարհում կան 20-40 մլն ապօրինի գաղթականներ: Ճշգրիտ թվերը սխալալը անհնարին է:

ԱՄՆ-ը ամեն տարի հյուրընկալում է մեկ մլն օրինական եւ 300 հազար անօրինական գաղթականների: Ներկայումս ավելի քան հինգ մլն ապօրինի օտարականներ են ապրում այնտեղ: Նրանց մոտ կեսը մեքսիկացիներ են: Միացյալ Նահանգների արդարադատության քարտուղարության հաշվարկներով ամեն տարի սահմանն անցնում են 700 հազար կանայք եւ երեխաներ, որոնցից 175 հազարը՝ նախկին Խորհրդային Միությունից:

Եվրոպան տարեկան հյուրընկալում է մինչեւ 500 հազար ապօրինի գաղթականների: Ներկայիս Իտալիայում, Հունաստանում, Իսպանիայում, Պորտուգալիայում եւ Գերմանիայում ապրող անօրինական օտարականների թիվը հասնում է երեք միլիոնի:

Գերմանիայում նրանց թիվը 800 հազար է, Բելգիայում՝ 70 հազար, Հունաստանում՝ 650 հազար, հիմնականում ալբանացիներ, Ավստրիայում՝ 43 հազար, որը 1998 թ. տվյալների կրկնապատիկն է, Ռուսաստանում՝ 500 հազար, որոնցից 200 հազարը Մոսկվայում են տեղավորված:

Անօրինական գաղթականների մոտ 600 հազարը (տարեկան) նախկին Խորհրդային Միությունից է: Չինաստանն «ապահովում է» տարեկան 100 հազար գաղթական՝ այդ գործով զբաղվող որոշակի կազմակերպություններին 3 միլիարդ դոլարի շահույթ ապահովելով: Չինացիների մեծ մասը հարավում գտնվող Ֆուջի նահանգից է: Այդ տարածքի գյուղերի բնակչության 10 տոկոսը գաղթել է. սկզբնական շրջանում ԱՄՆ-ը եղել է նպատակակետը, բայց վերջերս եվրոպան է դարձել «առավել գրավիչ»: Բրիտանիայում այժմ 250 հազար չինացիներ են ապրում, իսկ Ֆրանսիայում նրանց թիվը հասնում է 200 հազարի:

Հ. Ե.

ԱԴՐԲԵՋԱՆ

Միլի մեջլիսի ընտրությունները տեղի կունենան նոյեմբերի 5-ին

ԲԱՔՈՒ, 7 ՀՈՒԼԻՍ, ՍՆՍՐՔ- Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը հրաման է ստորագրել Միլի մեջլիսի ընտրությունները նոյեմբերի 5-ին անցկացնելու վերաբերյալ:

Հուլիսի 5-ին նախագահ Հեյդար Ալիեւը ստորագրել է «Միլի մեջլիսի ընտրությունների վերաբերյալ» օրենքը: Իսկ հուլիսի 6-ին ստորագրվել է «Միլի մեջլիսի ընտրությունների» վերաբերյալ օրենքի կիրառման մասին նախագահի հրամանը: Տեղի դիտորդները դա տարօրինակ են համարել, քանի որ հուլիսի 6-ի երեկոյան Ավստրիայից վերադառնալուց հետո նախագահը լրագրողներին հայտարարել է, որ չգիտի, թե ինչ տեսքով է ընդունվել օրենքը եւ ասել է վետո կիրառելու անհրաժեշտության մասին:

Ադրբեջանի խորհրդարանում քննարկման ընթացքում օրինագիծը ենթարկվել է ընդդիմության ներկայացուցիչների լուրջ քննադատությանը: Կառավարող մեծամասնության պատգամավորների կողմից ընտրությունների վերաբերյալ օրենքի ընդունումից հետո ընդդիմադիր պատգամավորները ցուցադրաբար լքել են նիստերի դահլիճը: Ընդդիմություն ներկայացնող պատգամավորների լուրջ դժգոհությունն են առաջ բերել 20 եւ 19 հոդվածները: Դրանց են նվիրված եղել Միլի մեջլիսի 4 նիստ: Երկու հոդվածները նախատեսում են խորհրդարանական մեծամասնության, խորհրդարանական փոքրամասնության եւ անկուսակցական պատգամավորների թվից 1/3 սկզբունքով շրջանային եւ տեղամասային հանձնաժողովների ձեւավորում: Շրջանային ընտրական հանձնաժողովները պետք է կազմված լինեն 9-ական, տեղամասայինը 6-ական անկուսակցական ներկայացուցիչներից: Անկուսակցականներից մեկական ներկայացուցիչներ պետք է համաձայնեցվեն քահանայի կողմերի հետ: Որոշումները պետք է ընդունվեն ձայների մեծամասնությամբ՝ 2/3-ով: Նախագահի Միլի մեջլիս դիմելուց հետո վերջին կետը հանվել է օրենքի 20 հոդվածից, իսկ օրենքն ամբողջությամբ ընդունվել է:

Ընդդիմությունը գտնում է, որ դրանով ձայների վճռական մեծամասնությունը տեղամասային հանձնաժողովներում անցնում է իշխանությանը: Խորհրդարանական փոքրամասնությունը հանդես է եկել Կենտրոնական ընտրական հանձնաժողովից իրենց թեկնածուներին հետ կանչելու վերաբերյալ հայտարարությամբ: Հայտարարությանն աջակցել են ընդդիմադիր կուսակցությունների մեծամասնությունը: Հայտնի է, որ ԿԸՀ-ի 18 անդամներից 6-ը պետք է առաջադրվեն ընդդիմության կողմից, իսկ մեկը անկուսակցականներից, որի թեկնածությունը պետք է համաձայնեցվի ընդդիմության հետ նույնպես: Այսպիսով ԿԸՀ-ն մնում է առանց 7 անդամների:

Բացի 19 եւ 20 հոդվածներից, ընդդիմությունը պահանջում է այլ փոփոխություններ մտցնել օրենքում:

Ֆրանսիայի նախագահական ժամկետը կհաստատվի սեպտեմբերի 24-ին

ՓԱՐԻԶ, 7 ՀՈՒԼԻՍ, ՍՆՍՐՔ- Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը հայտարարել է, որ նախագահական լիազորությունների ժամկետը մինչեւ 5 տարի կրճատելու առնչությամբ քվեարկությունը տեղի կունենա սեպտեմբերի 24-ին: Այսպիսով, Ժ. Շիրակը հրաժարվել է այդ հարցը Սենատի եւ Ազգային ժողովի համատեղ կոնգրեսում լուծելու գաղափարից, ինչպես դա նրանից պահանջել են որոշ քաղաքական շրջանակներ, որոնք զգուշանում են, որ քվեարկությունը տեղի չի ունենա ընտրողների՝ քվեարկությանը ներկայանալու ցածր մակարդակի պատճառով, գրում է Les Echos-ը:

Ածխաթթու գազը կթաղվի ծովի խորքերում

Ածխով եւ գազով գործող էլեկտրակայանները զգալի քանակությամբ ածխաթթու գազ են արտազատում, որի հետեւանքներից է երկրի մթնոլորտի տաքացումը կամ, այսպես կոչված, ջերմոցային էֆեկտը: Վերջինիս ընթացքը հնարավոր է դանդաղեցնել ածխաթթու գազի թաղման՝ միջոցով, պնդում են ճապոնացի գիտնականները: Նրանք առաջարկում են գազը ծովի խորքը լցնել սառցաբեկորների տեսքով:

Արդյունաբերական ծագում ունեցող ածխաթթու գազից ազատվելու գաղափարը նոր չէ: Նավթարդյունաբերողներն արդեն թաղում են գազը, բայց՝ հողի տակ: Նորվեգական «Սլեյպներ» ընկերությունը 1996 թվականից ամեն տարի նավթահորերից դուրս եկած 20 հազար տոննա գազ է ներմղում 1000 մետր խորության կավճահողում:

Գազի ջրային թաղումը, սակայն, նոր եղանակ է, որը վերջին տասնամյակում մշակվում է ամերիկյան, գերմանական, ավստրալական, անգլիական եւ ֆրանսիական լաբորատորիաներում: Ենթադրվում է այն կիրառել մի քանի տարի հետո: Համաշխարհային օվկիանոսն արդեն 40 հազար մլրդ տոննա լուծված ածխածին է պարունակում, եւ տարեկան եւս մի քանի միլիարդ տոննա ավելացնելը պետք է որ աննկատ անցնի:

Նախատեսվում է գազն ընկղմել երկու ձեւով: Առաջին դեպքում այն սառեցված կամ հեղուկ տեսքով լցվելու է 3000 մետր խորությունում: Այս դեպքում ածխաթթու գազը ջրում լուծվելով՝ գոյացնում է բիկարբոնատ: Տվյալ խորության նպատակահարմարությունն ապացուցված է լաբորատորիայի նմանակման միջոցով. 3000 մետր խորության վրա ընկղմումից 2 դար հետո դեռ մնում է ածխածնի 98 տոկոսը: Երկրորդ դեպքում ածխաթթու գազը «փակվում» է օվկիանոսի խորխորատներում՝ այնտեղ մնալով գրեթե եւ մանավանդ ուժեղ ճնշման հետեւանքով: «Պուեն» հանդեսը տեղեկացնում է, որ երկրորդ եղանակը բնապահպանության առումով այնքան էլ վստահելի չի համարվում, ուստի գիտնականները նախապատվությունը տալիս են 3000 մետր խորությունում գազի դանդաղ լուծման եղանակին: Այս առումով լավագույններից մեկը Ձիբլարթարի նեղուցից արեւելք ընկած տարածքն է, որտեղ Ատլանտյան օվկիանոսի ջրերը գալիս-ծածկում են Միջերկրական ծովի ջրերը:

Լուրջ խոչընդոտներից մեկն այն է, որ բիկարբոնատը կարող է թթվեցնել ջրերը եւ հանգեցնել պլանկտոնի, մանրէների եւ ծովի խորքերում ապրող մյուս միկրոօրգանիզմների ոչնչացմանը: Մասաչուսեթսի (ԱՄՆ) տեխնոլոգիական ինստիտուտի մի խումբ գիտնականներ մտադիր են եկող տարի Հավայան կղզիներից ոչ հեռու փորձարկել օվկիանոսում ածխաթթու գազի մանրակաթիլ ցրման եղանակը, որը, նրանց կարծիքով, անվնաս է լինելու:

Պ. Ռ.

մշակույթ

Հայ մշակույթի պատմության մեջ կան երախտավորներ, որոնց անունն ու ստեղծագործությունը ժամանակի ընթացքում մոռացության են մատնվել: Նրանց ամբողջ կենսագրությունը՝ բազմաբնույթ նյութերի ու փաստաթղթերի ձեւով պահպանվում են գրականության եւ արվեստի թանգարանում՝ սպասելով իրենց վերակենդանացմանն ու ոգեկոչմանը: Հայ ժողովրդի մեծանուն արվեստագետների կողքին իր ուրույն տեղն ունի 20-րդ դարասկզբի ականավոր երաժիշտ, «աուերյան դպրոցի» ներկայացուցիչ, վիրտուոզ ջութակահար եւ հմուտ մանկավարժ Հովհաննես Նալբանդյանը: Արխիվում պահպանվող նյութերից (ինքնակենսագրություն, հուշեր, նամակներ, գրախոսականներ եւ այլն) մեր առջեւ վեր է հառնում մեծ հմայքի եւ բարձր ինտելեկտի տեր մի անձնավորություն, որի կենսագրությունը լի է հիշարժան հանդիպումներով (Այվազովսկի, Չայկովսկի, Սարասատե...), եւ համերգային շրջագայություններով: Նա պատկանում է այն արվեստագետների շարքին, որոնք ծնվելով եւ դաստիարակվելով հայկական միջավայրում, հանգամանքների բերումով իրենց գործունեությունը ծավալեցին հայրենիքից դուրս եւ իրենց պրոֆեսիոնալիզմով ու կատարման բարձր մակարդակով չգիջելով օտարազգի կատարողներին, համերգներով հանդես եկան Ռուսաստանում եւ Եվրոպայի մի շարք երկրներում: 1907 թ. Հովհ. Նալբանդյանը հյուրախաղերով հանդես է եկել Երեւանում եւ Ալեքսանդրապոլում: «...Ալեքսանդրապոլում շատ մեծ է եղել տաղանդավոր ջութակահարին լսել ցանկացողների թիվը: Եվ ահա մի համերգը դարձել է երեք համերգ, որոնք տրվել են երկու օրվա ընթացքում... Երեք համերգներն էլ եղել են բազմամարդ: Հասարակությունը ջերմագին ողջունել է ջութակահարին... Նալբանդյանն իր ջութակով գրավում է լսողին եւ տեղափոխում նրան ձայների մի հրաշագեղ աշխարհ»: («Մշակ», 1907 թ.):

Նալբանդյանի նամակներից մենք տեղեկանում ենք, թե որքան մեծ է եղել նրա ցանկությունը նորից համերգներով հանդես գալու Հայաստանում, սակայն, ցավոք սրտի, որոշ օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով այն չիրականացավ:

Ստորեւ ընթերցողին առաջին անգամ թարգմանաբար ներկայացնում ենք Անուշավան Տեր-Ղեւոնդյան-Հովհաննես Նալբանդյան նամակագրությունից 3 նամակ, որոնք առնչվում են վերը նշված խնդրին:

■ Մեծարգո եւ թանկագին Հովհաննես Ռոմանովիչ.

Մենք շատ ուրախ կլինենք Ձեզ տեսնելու Երեւանում, սակայն մեր կոլեգիայի անունից ցանկանում ենք Ձեր ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ Երեւանը մեծ քաղաք չէ, եւ երեք համերգ տալու դեպքում, մեծ թվով հանդիսատես հավաքել հնարավոր չէ: Կոնսերվատորիան կիր, եւ հատկապես այժմ, երբ ամեն կողմից լսում եմ նրա վերածննդի մասին: Աղաչում եմ Աստծուն, որ ծաղկուն Ալեքսանդրապոլին հասած դժբախտությունից հետո երկիրը արագ վերականգնվի:

Ես որոշեցի հետաձգել ուղեւորությունս ավելի լավ ժամանակների եւ վստահ եմ, որ Դուք էլ ինձ նույն խորհուրդը կտայիք: Իսկ այժմ ցանկանում եմ Ձեզ հաջողություն եւ ամենայն բարիք:

Անկեղծորեն Ձեզ սիրող՝
Նալբանդյան

Հ. Գ. Թանկագին Անուշավան Գրիգորեւիչ. շնորհավորում եմ Ձեզ ռեկտորության առթիվ եւ ուրախանում Ձեզ բեղմնավոր գործունեություն:

30 նոյեմբերի, 1926 թ.

■ Թանկագին Անուշավան Գրիգորեւիչ

Ստացա Ձեր երկու հեռագրերը, որոնք ինձ չափազանց զարմացրին. ես բոլորովին չէի սպասում, որ իմ ժամանումը այժմ հնարավոր է: Եթե Ձեր նամակը նույնքան հաստատակամ լիներ, որքան Ձեր հեռագրերը, ապա ես արդեն Երեւանում կլինեի: Սակայն ստանալով Ձեր նոյեմբերի 12-ին գրած նամակը, ուր Դուք գրում եք. «... մեր կոլեգիայի անունից ցանկանում ենք ձեր ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ Երեւանը մեծ քաղաք չէ, եւ երեք համերգ տալու դեպքում մեծ թվով հանդիսատես հավաքել հնարավոր չէ», ես հասկացա, որ իմ այցը անժամանակ է, այդ պատճառով էլ հետաձգեցի ավելի հարմար ժամանակի:

Դրամփյանի հետ աշնանային խոսակցությունից ես պարզեցի, որ համերգները կարող են այնքան հաջող լինել, որ կոնսերվատորիան էլ, որն իր վրա է վերցնում կազմակերպական գործը, կարող է որոշ գումար վաստակել: Հայրենի երկիր ուղեւորության պատրաստվելիս ինձ առաջնորդում էր ո՛չ նյութական շահը: Ես ցանկանում էի փոխհատուցել միայն ուղեւորության համար անհրաժեշտ ծախսերը: Խորապես ցավում եմ, որ իմ ուղեւորությունը չիրականացավ, սակայն հույս ունեմ, որ երազանքս ապագայում կիրականացնեմ: Իսկ այժմ ցանկանում եմ Ձեզ ամենայն բարիք:

Ձեզ անկեղծորեն հարգող եւ սիրող՝
Նալբանդյան
27 դեկտեմբերի, 1926 թ.
ՏՈՂԱԿԻ ԲԵՌԱՐՅԱՆ

Ձեզ կընդառաջի եւ մենք կաշխատենք նախապատրաստել հասարակությանը Ձեր ժամանմանը: Մանրամասն գրեք, թե երբ եք մտադրված գալ եւ ինչպիսի պայմաններով:

Անկեղծ հարգանքներով
Ձեզ նվիրված Ա. Տեր-Ղեւոնդյան
Պետկոնսերվատորիայի ռեկտոր
12 նոյեմբեր, 1926 թ.

■ Թանկագին Անուշավան Գրիգորեւիչ.

Ստանալով Ձեր նամակը, ցանկացա անմիջապես պատասխանել, սակայն հետաձգեցի, որպեսզի հնարավորություն ունենամ ավելի հանգիստ այս կամ այն որոշումն ընդունել: Ուղեւորությանս մասին Դրամփովի հետ ես խոսել էի նախքան Ալեքսանդրապոլի սոսկալի աղետը:(*) Իհարկե, այժմ, դրանից հետո, համերգային շրջագայության մասին խոսելու ժամանակը չէ: Պետք է ասեմ, որ իմ վաղեմի երազանքն է եղել գալ հայրենի երկիր:

(*) Խոսքը վերաբերում է 1926 թ. Շիրակի երկրաշարժին:

Նա տանում էր մի ուրիշ աշխարհ

Ջութակահար Հովհաննես Նալբանդյանի առեղծվածը

Նալբանդյանը: Արխիվում պահպանվող նյութերից (ինքնակենսագրություն, հուշեր, նամակներ, գրախոսականներ եւ այլն) մեր առջեւ վեր է հառնում մեծ հմայքի եւ բարձր ինտելեկտի տեր մի անձնավորություն, որի կենսագրությունը լի է հիշարժան հանդիպումներով (Այվազովսկի, Չայկովսկի, Սարասատե...), եւ համերգային շրջագայություններով: Նա պատկանում է այն արվեստագետների շարքին, որոնք ծնվելով եւ դաստիարակվելով հայկական միջավայրում, հանգամանքների բերումով իրենց գործունեությունը ծավալեցին հայրենիքից դուրս եւ իրենց պրոֆեսիոնալիզմով ու կատարման բարձր մակարդակով չզիջելով օտարազգի կատարողներին, համերգներով հանդես եկան Ռուսաստանում եւ Եվրոպայի մի շարք երկրներում: 1907 թ. Հովհ. Նալբանդյանը հյուրախաղերով հանդես է եկել Երեւանում եւ Ալեքսանդրապոլում: «...Ալեքսանդրապոլում շատ մեծ է եղել տաղանդավոր ջութակահարին լսել ցանկացողների թիվը: Եվ ահա մի համերգը դարձել է երեք համերգ, որոնք տրվել են երկու օրվա ընթացքում... Երեք համերգներն էլ եղել են բազմամարդ: Հասարակությունը ջերմագին ողջունել է ջութակահարին... Նալբանդյանն իր ջութակով գրավում է լսողին եւ տեղափոխում նրան ձայների մի հրաշագեղ աշխարհ»: («Մշակ», 1907 թ.):

Նալբանդյանի նամակներից մենք տեղեկանում ենք, թե որքան մեծ է եղել նրա ցանկությունը նորից համերգներով հանդես գալու Հայաստանում, սակայն, ցավոք սրտի, որոշ օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով այն չիրականացավ:

Ստորեւ ընթերցողին առաջին անգամ թարգմանաբար ներկայացնում ենք Անուշավան Տեր-Ղեւոնդյան-Հովհաննես Նալբանդյան նամակագրությունից 3 նամակ, որոնք առնչվում են վերը նշված խնդրին:

■ Մեծարգո եւ թանկագին Հովհաննես Ռոմանովիչ.

Մենք շատ ուրախ կլինենք Ձեզ տեսնելու Երեւանում, սակայն մեր կոլեգիայի անունից ցանկանում ենք Ձեր ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ Երեւանը մեծ քաղաք չէ, եւ երեք համերգ տալու դեպքում մեծ թվով հանդիսատես հավաքել հնարավոր չէ: Կոնսերվատորիան կիր, եւ հատկապես այժմ, երբ ամեն կողմից լսում եմ նրա վերածննդի մասին: Աղաչում եմ Աստծուն, որ ծաղկուն Ալեքսանդրապոլին հասած դժբախտությունից հետո երկիրը արագ վերականգնվի:

Ես որոշեցի հետաձգել ուղեւորությունս ավելի լավ ժամանակների եւ վստահ եմ, որ Դուք էլ ինձ նույն խորհուրդը կտայիք: Իսկ այժմ ցանկանում եմ Ձեզ հաջողություն եւ ամենայն բարիք:

Անկեղծորեն Ձեզ սիրող՝
Նալբանդյան

Հ. Գ. Թանկագին Անուշավան Գրիգորեւիչ. շնորհավորում եմ Ձեզ ռեկտորության առթիվ եւ ուրախանում Ձեզ բեղմնավոր գործունեություն:

30 նոյեմբերի, 1926 թ.

■ Թանկագին Անուշավան Գրիգորեւիչ

Ստացա Ձեր երկու հեռագրերը, որոնք ինձ չափազանց զարմացրին. ես բոլորովին չէի սպասում, որ իմ ժամանումը այժմ հնարավոր է: Եթե Ձեր նամակը նույնքան հաստատակամ լիներ, որքան Ձեր հեռագրերը, ապա ես արդեն Երեւանում կլինեի: Սակայն ստանալով Ձեր նոյեմբերի 12-ին գրած նամակը, ուր Դուք գրում եք. «... մեր կոլեգիայի անունից ցանկանում ենք ձեր ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ Երեւանը մեծ քաղաք չէ, եւ երեք համերգ տալու դեպքում մեծ թվով հանդիսատես հավաքել հնարավոր չէ», ես հասկացա, որ իմ այցը անժամանակ է, այդ պատճառով էլ հետաձգեցի ավելի հարմար ժամանակի:

Դրամփյանի հետ աշնանային խոսակցությունից ես պարզեցի, որ համերգները կարող են այնքան հաջող լինել, որ կոնսերվատորիան էլ, որն իր վրա է վերցնում կազմակերպական գործը, կարող է որոշ գումար վաստակել: Հայրենի երկիր ուղեւորության պատրաստվելիս ինձ առաջնորդում էր ո՛չ նյութական շահը: Ես ցանկանում էի փոխհատուցել միայն ուղեւորության համար անհրաժեշտ ծախսերը: Խորապես ցավում եմ, որ իմ ուղեւորությունը չիրականացավ, սակայն հույս ունեմ, որ երազանքս ապագայում կիրականացնեմ: Իսկ այժմ ցանկանում եմ Ձեզ ամենայն բարիք:

Ձեզ անկեղծորեն հարգող եւ սիրող՝
Նալբանդյան
27 դեկտեմբերի, 1926 թ.
ՏՈՂԱԿԻ ԲԵՌԱՐՅԱՆ

(*) Խոսքը վերաբերում է 1926 թ. Շիրակի երկրաշարժին:

Լորիս Ճգնավորյանը թողեց ֆիլհարմոնիկ նվագախումբը

Իսկ թողնելո՞ւ է արդյոք Հայաստանը

Վերջին օրվա կարեւոր իրադարձություն է դարձել խոսակցությունն այն մասին, որ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Լորիս Ճգնավորյանը ազատվել է աշխատանքից: Ինչպես եւ սպասելի է մեզ, ամենատարբեր վարկածներ են պտտվում: Ոմանք կարծում են, որ սա արդյունք է Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի եւ ՀՀ մշակույթի նախարարության միջեւ եղած անհամաձայնությունների: Ավելի անիրական եւ նույնիսկ անհեթեթ վարկածներ են պտտվում: Իրողությունը պարզելու համար դիմեցինք ՀՖՆ-ի եւ ՀՀ մշակույթի նախարարության պատասխանատուներին: ՀՖՆ-ից մեզ հաղորդեցին, որ իրենք իմացել են Լորիս Ճգնավորյանի դիմումի մասին եւ ցավով են ընդունել այդ փաստը: Ուրբաթ երեկոյան Լորիս Ճգնավորյանը Երեւանում չէր: Առայժմ նրան փոխարինելու են դիրիժոր Կարեն Դուրգարյանը եւ նվագախմբի առաջին ջութակ Յուրի Պողոսյանը:

ՀՀ մշակույթի նախարարի խորհրդական Կարապետ Վարդանյանը հաստատեց աշխատանքից ազատվելու ու Լորիս Ճգնավորյանի դիմումի փաստը: Դիմումը առայժմ անպատասխան է, քանի որ գրված է նախարար Ռ. Շառոյանի անունով, իսկ վերջինս Երեւանում կլինի միայն շաբաթ օրը:

Ս. Գ.

Իմիջիայլոց

Մի բառի մասին

Մասնագիտության բերումով մոսկովյան մամուլից թարգմանություններ կատարելիս հաճախ եմ դեմ առնում стратегия, стратегический բառերի հայավորմանը: Ինչ են տալիս հայոց բառարանները ստրատեգիա բառի դիմաց: 1. Խոշոր ռազմական գործողությունները եւ ամբողջ պատերազմը վարելու արվեստը: 2. Հասարակական ու քաղաքական պայքարի հիմնական ուղղությունն ու նպատակը պատմական համեմատական մեծ ժամանակաշրջանում:

Ահա եւ հիշյալ բառի հայերեն թարգմանության հիմքում դրվել է մարտնչող ռազմ(ական) բառը՝ ռազմավարություն: Լավ, եթե ստրատեգիան վերաբերում է ռազմական բնագավառին (ըստ բառարանի առաջին իմաստի), այն թերեւս կարող է հնչել որպես ռազմավարություն: Թեեւ այստեղ էլ անհարթություններ են առաջանում: Ասենք, ինչպես տարբերակել стратегический и военно-стратегический բառերը: Ի վերջո դրանք ռուսերենում եւ առհասարակ նույնական չեն: Եվ արհեստական «հարմարեցումները» բնավ էլ չեն հարստացնում հայոց լեզուն:

Բայց սա դեռ չարիքի փոքրագույնն է: Բառարանային երկրորդ իմաստի դեպքում թարգմանությունները երբեմն վերածվում են խեղկատակության: Օրինակ՝ մշակութային ռազմավարություն, այսինքն՝ մշակույթի բնագավառում ռազմական պայքար մղելու ուղղությունն ու նպատակը պատմական համեմատական մեծ ժամանակաշրջանում: Եվ այս նույն անհեթեթությունը նկատվում է հասարակական կյանքի ամենատարբեր ասպարեզների ստրատեգիայի թարգմանության ժամանակ՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական, առողջապահական, գիտական եւ այլն: Գիտական ռազմավարությո՞ւն:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

20-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ժամերի խաչմերուկում

20-րդ դարում քանիցս խաչվել են ֆրանսիական մեծ դրամատուրգիայի, թատրոնի ու երաժշտության ուղիները: Բավական է նշել Պոլ Կլոդելի եւ Պարիսյան Միյոյի դաշինքը: Ի դեմ, Կլոդելը «Քրիստափոր Կոլումբոս» օրատորիայի տեքստը գրել է 1930 թ. եւ միայն հինգ տարի անց որպես առանձին դրամա լույս ընծայեց «Քրիստափոր Կոլումբոսի գիրքը»: Իսկ ավելի ուշ՝ 1953 թ. կրկին Կլոդելի «Քրիստափոր Կոլումբոսին» անդրադարձավ Ժան-Լուի Բարոն՝ Միյոյին խնդրելով իր ներկայացման համար գրել նոր երաժշտություն: Կլոդելի հետ համագործակցել է նաեւ Արթուր Օնեգերը՝ «Ժաննա դ'Արկը խարույկի վրա» հանրահայտ դրամատիկ օրատորիայի հեղինակը: Ինչպես Միյոյի դեպքում, այստեղ եւս ընթանում էր դրամատիկ եւ երաժշտական թատրոնների նոր համադրության ուղիների որոնում, որն, ի դեմ, դարասկզբից Ռուսաստանում խոռվել է մտքերը (Ա. Թահիրով, Ե. Վախթանգով, Վ. Մեյերհոլդ):

Ոչ միայն Կլոդելի, այլեւ Ժան Կոկտոյի իրականացրած հին հունական ողբերգությունների պարաֆրազները (օրինակ, Իգոր Ստրավինսկու «Էդիպ արքա» օրատորիան եւ Օնեգերի «Անտիգոնե» օրատորիան՝ երկուսն էլ 1927 թ.), ըստ էության, արտացոլեցին ավելի ուշ ֆրանսիական թատրոնին բնորոշ հետաքրքրությունն անտիկ ժամանակաշրջանի, թատերական խառն ավանդույթների հանդեպ, որոնք ներառում են թե արտաբերողական մշակույթները, թե միջնադարյան միստերիաները եւ թե հրապարակային թատրոնի բանահյուսությունը: Այդ գծի մարմնավորումը կարող է լինել Օլիվիե Մեսիանի «Սբ. Ֆրանցիսկ Ասիզացի» օրատորիա-միստերիան, որի բեմականացման մեջ (1983) միավորված են արդի թատերական պրակտիկայի տեխնիկական նվաճումները:

Բայց Ֆրանսիական թատրոնի ռացիոնալ-հոգեբանական գիծը ուրանոս էր նաեւ Ֆրանսիայի նշանավոր երաժիշտներին: Ֆրանսիս Պուլենկի հանրահայտ «Չայն մարդկային» օպերան (ըստ Ժ. Կոկտոյի ոչ պակաս հանրահայտ մոնոդրամայի) նշանակալի իրադարձություն եղավ անցած հարյուրամյակի պատմության մեջ: Բայց դա արդեն 1958 թ. էր, երբ Ֆրանսիական թատրոնը վերադարձել էր Անտոնեն Արտոյի եւ Ռոբեր Դեսնոսի գաղափարները: Վերջինիս բնորոշ զուգադրումների ինքնաբուխ հոսքի եւ ենթագիտակցորեն միավորված գեղարվեստական կերպարների գաղափարը, այսպես կոչված, «կցկտուր գիտակցության» գաղափարը հոգեհարազատ էր Ժան-Լուի Բարոյին:

Բարոյի անվան հետ է կապված 20-րդ դարի կարկառուն կոմպոզիտորներից մեկի՝ վերջերս իր 75-ամյակը տոնած Պիեռ Բուլեզի գործունեությունը: Երիտասարդ Բուլեզը (նա 21 տարեկան էր) 1946-56 թթ. Ժ.-Լ. Բարոյի եւ Մադլեն Ռենոյի համատեղ գլխավորած Մարինյի թատրոնի երաժշտական ղեկավարն էր: Բարոյի հետ ստիպված հետագայում էլ շարունակվեցին, բայց հենց Մարինյիում, «Համլետի» բեմականացման նորարարական սկզբունքից ծայր առնելով, ձեւավորվեց սյուրռեալիզմը Բուլեզի երաժշտական-բանաստեղծական հակումներում:

Եվ Մարինյի թատրոնի ներկայացումների համար նախատեսված կիրառական երաժշտությանը զուգընթաց Բուլեզը հենց այդ տասնամյակում մի շարք կանտատներ («Ջրերի արեւ», «Հարսանեկան խումբ» եւ «Մուրճն առանց վարպետի») գրեց Ռընե Շարի խոսքերով՝ այդպիսով դառնալով երաժշտական ավանգարդի լիդերը, Բարոյի պես միավորելով իրական եւ վերացական ափարները:

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Արվեստագիտության դոկտոր

Երեկ ներկայացան «Միսս եւ միստր մանկապարտեզ. Հայաստան-2000»-ի հաղթողները

Երեկ Գ. Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնում «Ազնավուր- 24» բարեգործական հիմնադրամը, հիմնադիր կազմակերպիչ Ա. Խաչատրյանի ղեկավարությամբ, ներկայացրեց «Միսս եւ միստր մանկապարտեզ. Հայաստան-2000» մրցույթ-փառատոնի հաղթողներին: Մրցույթին, որը տեղի էր ունեցել հունիսին, մասնակցել են 140 երեխաներ մայրաքաղաքից, Արցախից, Գյումրիից, Էջմիածնից, Ստեփանակերտից, Տավուշից, Արմավիրից: Մրցույթ-փառատոնն անցկացվել է 3-5, ապա 5-7 տարեկանների միջեւ: 5-7 տարեկանների մեջ հաղթող են ճանաչվել Անուշիկն ու Մարտինը, իսկ 3-5 տարեկանների շրջանում Կարինեն ու Մարտինը: Էֆ «Միսս մանկապարտեզ. Հայաստան-2000» է ճանաչվել 4-ամյա Մելինեն՝ Աստղաբերդի «Ծիծեռնակ» մանկապարտեզից: Նա արժանացել է նաեւ «Հանդիսատեսի համակրանք» տիտղոսին եւ իր զույգի՝ Արսենի հետ հանդիսատեսի կողմից ճանաչվել

«Լավագույն զույգ»: Մելինեին ողջունելու էին եկել Ստեփանոսուդիայից եւ «Աստղաբերդ կաթ» ձեռնարկությունից:

«21-րդ դարը երեխաների ժպիտով, գեղեցկությամբ եւ ներդաշնակությամբ» կարգախոսով մրցույթ-փառատոնի բոլոր մասնակիցներն արժանացել են տիտղոսների («Ազնավուր-24», «Ժպիտ», «Հմայք» եւ այլն): Շնորհագեղ փոքրիկները գեղեցիկ կատարումներով եւ յուրօրինակ զգեստներով հիացնում էին հանդիսատեսին: Նրանց ողջունելու էին եկել մայրաքաղաքի Մարիոնետների թատրոնից, գեղարվեստական խմբեր: Հանդիսությանը ներկա էին բարձրաստիճան հյուրեր, փոքրիկների հարազատները, ներկայացուցիչներ տարբեր կազմակերպություններից: Վերջում երեխաները բազմաթիվ նվերներ ստացան իրենց կողմից:

ՆԱԻՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

Ֆուտբոլը շարժվում է առաջ

Եվրոպայի 11-րդ առաջնությունը պատմություն դարձավ: Առաջին անգամ նման մրցաշարն անցկացվեց միանգամից երկու երկրներում՝ Հոլանդիայում եւ Բելգիայում: Ավելի քան երեք շաբաթ այդ երկրների ութ քաղաքների մարզադաշտերում հավաքված ֆուտբոլասերներն ու աշխարհի բազմամիլիոն հեռուստադիտողներն ականատես եղան լարված, հետաքրքիր պայքարի: Բոլորը նշում են, որ Հոլանդիայի ու Բելգիայի կանաչ խաղադաշտերում հոյակապ ֆուտբոլային «ներկայացումներ» խաղարկվեցին, որոնցում շատ էին դրամատիզմը, անսպասելի շրջադարձերը:

Եվրո-2000-ը մտորումների հարուստ նյութ ընծեռեց նաեւ մասնագետներին: Միշտ էլ նման խոշոր մրցաշարերը, ինչպիսիք են աշխարհի ու Եվրոպայի առաջնությունները, նախանշում են մարզածեւի հետագա զարգացման միտումները:

Առաջնությունը ցույց տվեց, որ ժամանակակից ֆուտբոլում հաջողություն ակնկալել կարող են միայն այն թիմերը, որոնք համաչափ, ուժեղ կազմ ունեն: Իսկ բոլոր գոտիներում պետք է լինեն առաջատարներ, որոնք իրենց ետեւից են տանում մյուսներին: Մեկ անգամ եւս համոզվեցինք, որ բոլոր չորս բաղադրիչները՝ ֆիզիկական պատրաստականություն, տեխնիկա, տակտիկա, բարոյակամային հատկանիշներ, պետք է բարձրության վրա լինեն: Այդպիսի հատկանիշներով օժտված էին առաջնությունում բարձր տեղեր գրաված հավաքականները:

Ֆրանսիայի, Իտալիայի, Հոլանդիայի հավաքականները մեկ անգամ եւս հաստատեցին իրենց բարձր կարգը: Հաճելիորեն զարմացրեց Պորտուգալիայի ընտրանին: Իհարկե, եղան նաեւ հիասթափություններ: Իրենց հնարավորություններից հատկապես ցածր հանդես եկան առաջնությունից առաջ ֆավորիտներ համարվող Անգլիայի ու Գերմանիայի հավաքականները: Անհաջողակների թվին են դասվում Իսպանիայի, Չեխիայի, Հարավսլավիայի ընտրանիները, իսկ Բելգիայի, Շվեդիայի, Նորվեգիայի, Դանիայի հավաքականները պարզապես հիասթափեցրին:

Այս առաջնությունն էլ ունեցավ իր հերոսները՝ Զիդան, Անրի, Վիլտոր (Ֆրանսիա), Տոլդո (Իտալիա), Կլայվերս (Հոլանդիա), Ֆիգու, Գոմիշ (Պորտուգալիա), Մենդիետա (Իսպանիա)... Բոլորին չես էլ թվարկի: Եղան նաեւ «հակահերոսներ»: Թերեւս, ոչ մի խոշոր մրցաշարից հետո այսքան խաղացողներ հրաժեշտ չտվեցին իրենց հավաքականներին, որքան այս առաջնությունից հետո: Նշենք թեկուզ մի քանիսին՝ Շիրեր, Ադամս, Ինս (Անգլիա), Մաթեուս (Գերմանիա), Հաջի (Ռումինիա), Բլան, Դեշամ (Ֆրանսիա): Նրանք իրենց հետքն են թողել համաշխարհային ֆուտբոլում: Բայց Հոլանդիայի եւ Բելգիայի խաղադաշտերում մի շարք երիտասարդ ֆուտբոլիստներ նորովի փայլեցին, իսկ մի քանիսի խաղը պարզապես հայտնություն էր: Այո՝ ֆուտբոլը տեղում կանգ չի առնում:

Առաջնության որոշ փաստեր ու թվեր

Եվրոպայի 11-րդ առաջնությունը հավանաբար ռեկորդային էր մարզիչների հրաժարականների առումով: 16 հավաքականների կեսից ավելին զրկվեցին իրենց գլխավոր մարզիչներից: Եվ, որքան էլ տարօրինակ է, հրաժարական են տվել նաեւ հաջողության հասած թիմերի մարզիչները:

Մասնավորապես, հրաժարական են տվել Իտալիայի, Հոլանդիայի, Պորտուգալիայի մարզիչները:

Մեծ դժգոհությունների առիթ տվեց մրցավարությունը: Թվում էր, թե ՈՒԵՖԱ-ի մրցավարական հանձնաժողովն ընտրել է լավագույններին, բայց համարյա բոլոր եւ, հատկապես, վճռական խաղերում մրցավարները կոպիտ սխալներ թույլ տվեցին, որոնք ազդեցին արդյունքի վրա: Կարեւորը՝ չկար մրցավարների միանման մոտեցում, միանման գնահատում:

Մրցավարները 10 անգամ կարմիր քարտ են ցույց տվել: Ընդ որում, չեխ Լասալը կարմիր քարտ է ստացել, երբ գտնվում էր պահեստայինների նստարանին, իսկ պորտուգալացի Գոմիշը հեռացվել է... խաղի ավարտից հետո: Հեռացումների գծով ռեկորդակիրը Հարավսլավիայի հավաքականն է. նրա ֆուտբոլիստներից 3-ին մրցավարները կարմիր քարտ են ցույց տվել:

Համեմատության համար ասենք, որ նախորդ՝ 1996 թ. առաջնությունում ընդամենը 7 ֆուտբոլիստ էր հեռացվել խաղադաշտից: Դրա փոխարեն այս անգամ զգալիորեն փոքր էին դեղին քարտ ստացողները՝ 113 (նախորդ առաջնությունում մրցավարները նախազգուշացրել էին 153 անգամ):

Ամենակոպիտ խաղերը հետեւյալներն էին՝ Իտալիա-Հոլանդիա (1 կարմիր եւ 8 դեղին քարտ), Ֆրանսիա-Պորտուգալիա (1 եւ 7), Պորտուգալիա-Թուրքիա (1 եւ 7), Հարավսլավիա-Նորվեգիա (1 եւ 6), Հարավսլավիա-Իսպանիա 1 եւ 5):

Իտալիա-Թուրքիա, Իտալիա-Շվեդիա եւ Ֆրանսիա-Դանիա հանդիպումներում մրցավարները ոչ մի քարտ ցույց չեն տվել:

Նշենք, որ ամենակոռեկտ թիմ է ճանաչվել Ֆրանսիայի հավաքականը: Եվրոպայի չեմպիոնին հանձնվել է «Ֆեյր փլեյ» (արդարացի խաղի համար) մրցանակը: Երկրորդը հոլանդացիներն են:

Եվրո-2000-ի 31 խաղերում 85 գոլ է խփվել (մեկ խաղում միջինը 2,83 գոլ):

Ահա ռմբարկուների ցուցակը.

Կլայվերս	Հոլանդիա	5
Միլոշեւիչ	Հարավսլավիա	5
Գոմիշ	Պորտուգալիա	4
Կոնսեյսաո	Պորտուգալիա	3
Զահովիչ	Սլովենիա	3
Անրի	Ֆրանսիա	3
Մենդիետա	Իսպանիա	2
Ալֆոնսո	Իսպանիա	2
Ֆ. դե Բուր	Հոլանդիա	2
Զենդեն	Հոլանդիա	2
Օվերմարս	Հոլանդիա	2
Զիդան	Ֆրանսիա	2
Ջորկաեֆ	Ֆրանսիա	2
Վիլտոր	Ֆրանսիա	2
Տրեզեգե	Ֆրանսիա	2
Տոտի	Իտալիա	2
Ինզագի	Իտալիա	2
Հական	Թուրքիա	2
Շմիցեր	Չեխիա	2
Շիրեր	Անգլիա	2

33 ֆուտբոլիստներ 1-ական անգամ են գրավել մրցակիցների դարպասները: Իսկ հարավսլավացի Գովեդարիցան 1 գնդակ ուղարկել է սեփական թիմի դարպասը:

Բոլորից շատ գոլ մրցակիցներին խփել են Ֆրանսիայի եւ Հոլանդիայի հավաքականների ֆուտբոլիստները՝ 13-ական: Ոչ մի գոլ չեն կարողացել խփել դանիացիները:

Առաջնությունում մրցավարները 13 անգամ 11 մ տուգանային հարվածներ են նշանակել: Դրանցից 5-ը չեն իրացվել:

Որոշ խաղեր աչքի ընկան գոլառատությամբ: 7-ական գոլ գրանցվեց Հոլանդիա-Հարավսլավիա (6-1) եւ Իսպանիա-Հարավսլավիա (4-3) հանդիպումներում: 6 գնդակ խփվեց Հարավսլավիա-Սլովենիա խաղում (3-3): Երեք անգամ գրանցվեց 3-2 հաշիվ: Երեք հանդիպումներում թիմերի դարպասները մնացին անառիկ (0-0): Ամենից հաճախ՝ 8 անգամ, գրանցվել է 2-1 հաշիվը:

Երկու ֆուտբոլիստներ դարձել են հեթ-տրիկի հեղինակ. 3 գոլ պորտուգալացի Կոնսեյսաոն խփել է Գերմանիային, հոլանդացի Կլայվերսը՝ Հարավսլավիային:

Ռ. Ա.

ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ԽԱՉԲԱՌ

ՃԻՇՏ ԼՈՒԾԵԼՈՎ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ԽԱՉԲԱՌԸ ԵՎ ԱՌԱՋԻԿԱ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԱՌԱՋԻՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ «ԱԶԳ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՈՂ ԵՔ ՍՏԱՆԱԼ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄՐՑԱՆԱԿ



Ուղղահայաց

1. Ամերիկացի բռնցքամարտիկ: 2. Մարդու օրգանիզմի զարգացման վաղ շրջանի կարգավիճակը: 3. Շինությունների ուղղաձիգ, սրածայր վերջավորություն: 4. Կանացի անուն: 5. Աղացած մսով ճաշատեսակ: 7. Գյուղ Մեղրի գետի վերին հոսանքի շրջանում: 8. Պետության կողմից հասարակության որոշ խավերին տրվող դրամական օգնություն: 10. Շինանյութ: 12. Դինամոմետր: 16. «Իլիականի» հերոսուհիներից: 17. Հայ բասկետբոլիստ: 19. Բամբասանք, ...: 20. Ռեոստատներում օգտագործվող պղնձի, նիկելի, մանգանի, երկաթի, ցինկի համաձուլվածք: 21. Հայ օպերային երգչուհի: 22. Շնամեռուկազգիների ընտանիքի բույս: 23. «Մորուքի սանտրը» նովելի հեղինակը: 24. Հնդիկ կին պետական գործիչ: 31. Դերձակի «գործիք»: 35. «Բոլերո» բալետի հեղինակը: 36. Քաղաք Ալժիրի հյուսիս-արեւելքում, Միջերկրականի ափին: 38. Կերուխումից գինովցած վիճակ: 39. Աղամաքուզ, ...: 40. Հողի մակերեսի չափման միավոր: 41. Լարային աղեղնավոր նվագարան: 45. Դուրյանի բանաստեղծություններից: 46. «Ոսկե հորթ» վեպի հեղինակներից Իլֆի անունը:

Հորիզոնական

6. Գետ Հայկական լեռնաշխարհում: 8. Ամուր գետի ստորին հոսանքներում ապրող ժողովրդի ներկայացուցիչ, որի հին անվանումն է գոլդ: 9. Հին հնդկական փիլիսոփայության 6 ուղղափառ դպրոցներից: 11. Մանր ազնվականների ռազմաֆեոդալական խավ Ճապոնիայում: 13. Քաղաք Բոսնիայում, Միլյացկա գետի ափին: 14. Սարդի ստեղծագործությունը: 15. Որեւէ ստեղծագործության սկզբից դրվող ներածական: 18. Դավաճան, ծախու, ...: 22. Հույն մեծահարուստ: 25. ... Դերանուն, որով գործողություն կատարողն այն վերագրում է իրեն: 26. Ցանելու համար հողը վարելը: 27. Փորիկ թռչուն: 28. Հին աշխարհի մեծ առակախոս: 29. Տղամարդու անուն: 30. «Նոթեր Շերլոկ Հոլմսի մասին» գրքի հեղինակը: 32. Մթնոլորտային տեղում: 33. XIX դ. հայ բանաստեղծ, մանկավարժ, գրաբարի անաղարտության պաշտպան: 34. Պորտուգալացի ծովագնաց Մագելանի անունը: 37. Ածխածնի եւ մետաղների միացությունից առաջացած նոր միացություն: 40. Նուրբ, սփռված ծաղր: 42. Հոլանդական ֆուտբոլային ակումբ: 43. Օրգանիզմի զարգացման, հասունացման վիճակ: 44. Քիմիական տարր, արծաթագույն մետաղ: 47. Վանք Արթիկից հարավ-արեւմուտք: 48. Բացասական իոն: 49. Գունավոր հեռուստացույցի հայ գյուտարարը:

Կազմեց է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Կարայան: 2. Բարբարոս: 3. Գառնի: 4. Թոխլի: 5. Ղազարյան: 6. Բուսակեր: 9. Usars: 10. Աբգար: 16. Այովա: 17. Բահրա: 21. Հորդանան: 23. Մարաջախտ: 24. Նազարեթ: 25. Սուղնի: 26. Սղագա: 27. Գերանդի: 31. «Այրին»: 32. Լուսոն:

Հորիզոնական

7. Գաբայան: 8. Նորադուզ: 11. Կարբոնատ: 12. Բալթազար: 13. Մայրի: 14. Գրչակ: 15. Այգեկ: 18. Եսայի: 19. Մասնե: 20. Եհովա: 22. Բրամս: 28. Կաղրի: 29. Գուլոպա: 30. Արմեն: 33. Մալաթյան: 34. Գյուրջյան: 35. Մելանիտ: 36. Կոլխիդա:

ՀԱՍԱՐՈՍ

«Կայունություն» խմբի ղեկավարի դեմ կիրառված բռնարարքի փաստով հարուցվել է քրեական գործ

ԵՐԵՎԱՆ, 7 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. ՀՀ Ազ «Կայունություն» ոչ առգամավորական խմբի ղեկավար Վարդան Այվազյանի դեմ Սեւանում հուլիսի 1-ին տեղի ունեցած բռնարարքի փաստով հարուցվել է քրեական գործ խուլիգանության հատկանիշներով: Շերբակալված են «Գրանդ տոբակո»-ի բաժնետեր եւ «Հայծխախոտ»-ի բաժնետերերի խորհրդի նախագահ Ռուբեն Հայրապետյանը եւ նրան ուղեկցած Տիգրան Շխյանը: Այս մասին հայտնեցին ՀՀ ՆԳՆ լրատվության եւ հասարակայնության հետ կապի վարչությունից:

Հիշեցնենք, հուլիսի 1-ին Սեւանում Ռուբեն Հայրապետյանը («Նեմեց Ռուբո») վիճաբանել է Վարդան Այվազյանի հետ՝ մեղադրելով ոչգամավորին ծխախոտ արտադրողների շահերը ոտնահարող օրենքի՝ «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին», ընդունման մեջ: Բանավեճին կոպտորեն միջամտել են Ռ. Հայրապետյանի թիկնապահները, եւ առաջացած քաշքշուկի մեջ մարմնական վնասվածքներ են հասցրել Վարդան Այվազյանին:

1700-ամյակի պետական հանձնաժողովի նոր կազմ Ռ. Քոչարյանի ղեկավարությամբ

Հայաստանի Հանրապետության նախագահը հուլիսի 7-ին ստորագրել է «Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարության կազմակերպման պետական հանձնաժողովի մասին» հրամանագիրը:

Ինչպես հայտնեցին ՀՀ նախագահի մամլո գրասենյակից, հրամանագրով հաստատվել է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարության կազմակերպման պետական հանձնաժողովի նոր կազմը:

Հանձնաժողովը ղեկավարում է Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Հանձնաժողովի աշխատանքների համակարգումը հանձնարարվել է հանձնաժողովի նախագահի տեղակալ Խոսրով Հարությունյանին: Նրան վերապահելով Հայաստանի Հանրապետության նախագահի խորհրդականի լիազորություններ:

Լեւոն Մկրտչյանը՝ փոխարտգործնախարար

Ըստ ՀՀ նախագահի մամլո գրասենյակի, նախագահ Ռոբերտ Քոչարյանի հուլիսի 7-ի հրամանագրով Լեւոն Մկրտչյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ:

Ի ԼՈՒՐ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ

Մամուլի ազգային ակումբը «Հրատապ թեմա» ծրագրի շրջանակներում լրագրողներին հրավիրում է հանդիպման ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանի հետ:

Հանդիպումը կկայանա երեքշաբթի՝ հուլիսի 11-ին, ժամը 11-ին, «Հոլսթեն» սրճարանում (Բուզանդի 1/3):

ՄԱՄՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ԹՈՒՅԼ ԼՍՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԴՊՐՈՑԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ 1-8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ 2000-2001 ԹԹ. ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Երեւանի թույլ լսող երեխաների հատուկ գիշերօթիկ դպրոցը իր տիպով միակ կրթօջախն է Հայաստանի Հանրապետությունում:

Այստեղ երեխաները ստանում են ութամյա կրթություն, տիրապետում արհեստների, տղաները՝ կոշկակարության, աղջիկները՝ կար ու ձեւի:

Կրթությունն ու դաստիարակությունը իրականացվում է հիմնականում մասնագետ (սուրդոլոգ) մանկավարժների կողմից: Ուսումնադաստիարակչական գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելուն օգնում են տեխնիկական միջոցների օգտագործումը՝ կոլեկտիվ եւ անհատական պարապմունքները:

Որակյալ սուրդոլոգ բժիշկը բացի կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելուց եւ սաների առողջությունը պահպանելուց, զբաղվում է նաեւ բուժման գործով:

Ճիշտ չէ, երբ որոշ ծնողներ, փոխանակ ժամանակին դպրոց բերելու թույլ լսող երեխային, տանում են անհատ մարդկանց մոտ բուժվելու եւ պարապելու:

Ծնողը պետք է ճիշտ կողմնորոշի երեխայի ապագան, ուսուցումը կարող է բացասաբար ազդել նրա ձեւավորման վրա: Թույլ լսող երեխան իր կոլեկտիվում ավելի ինքնավստահ է ու անկաշկանդ: Այստեղ միայն կդրսեւորվեն նրա կարողությունները եւ ի հայտ կգան ունակությունները:

Դպրոցն ունի նախադպրոցական եւ նախադպրոցական խմբեր, ուր կարող են ընդունվել նույն հիվանդությամբ տառապող 4-7 տարեկան երեխաներ:

Սովորողները կապահովվեն ձրի սննդով եւ հանրակացարանով:

Ընդունելությունը սկսում է օգոստոսի 10-ից:

Հասցեն՝ Հր. Ներսիսյան փող., թիվ 5
Թույլ լսող երեխաների հատուկ գիշերօթիկ դպրոց, հեռ. 28-88-05

ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

ՀԵՌԱՏԵՍԱՏԱՐԱԳԻՐ

8 հուլիս

9.00 Հայլուր
9.20 Հիթ շքերթ
9.50 Սեզամ, բացվիր
10.20 Մամուլի կրոյակ
10.30 Մեր փոքրիկը մեծանում է
11.05 Փաստագրական կինոնկար «Կենարար ծառը»
11.35 Կինոնկար երեխաների համար «Կարճ միացում»
13.00 Ջազի վարպետները
17.00 Հայլուր
17.20 Ոսկեփորիկ
17.50 Կարճամետրաժ կինոնկար «Լուսանկար»
18.10 Բարի ախորժակ
18.30 Մարգաշխարհ
19.00 Խորան լուսո
19.10 «Համով լոտո»
(նույն ժամին արբանյակային հեռարձակմամբ)
19.10 Ռուբիկոն+)
20.00 Իմ Միերը
21.00 Հայլուր
21.40 Պրեմիերա
21.50 Շինուժ
22.30 Փաստագրական շարք «Վերջին օրը». «Չե Գեւարա»
22.45 Հայոց տաճարներ
23.00 Բոհեմ
23.40 Հայլուր
00.00 Գ/Ֆ «13-րդ հարկ»

Պրոմեթեվս
10.00 «Բարի լույս, Հայաստան»
12.00 Մանկական սերիալ «Գուլիվերի ճանապարհորդությունը»
18.00 Մուլտֆիլմ
18.10 Մանկական ժամ. սերիալ «Նինձյա կրիաները», սերիալ «Կոբրա»
19.10 Հեռուստաֆուտբոլ
19.35 Համերգ
20.00 Լրաբեր
20.35 «Թիվ 1»
21.05 Համերգ
21.40 «Պահմտոցի»
22.00 Գ/Ֆ «Կաբարե»

11.05 Շեյփինգ Սինդի Քրուֆորդի հետ
11.30, 15.15 Մուլտֆիլմ
12.00 Տոմար
13.30, 16.30 Գ/Ֆ «Գայլի աչքը» (1-ին, 2-րդ սերիաներ)
15.00 Հրապարակ
16.00 Անհերեւակայելին իրականության մեջ
18.00 Համերգ
18.30 Հմայիլ
19.05 Շղջիկ
19.30, 21.30, 24.00 Սուրհանդակ
20.00 Մամուլի խոսնակ
20.10 Գիտաստղեր
20.30 Հեռագիծ
22.10 Համերգ Գառնի-2000
23.15 Ոստիկան
00.35 Ակնթարթ
24.00 Շաբաթ իրիկուն, ժամ 12-ին
0.30 Գ/Ֆ «Իդեալական ալիբի» (Սուրհանդակ)

9.00 Նորություններ
9.10 Հոգեւոր հովվի խոսքը. մետրոպոլիտ Կիրիլ
9.25 Սերիալ «Կուսոյի թիմի բոլոր ճանապարհորդությունները»
10.15 Նվագիր, հարմոն սիրելի
10.45 «Երալաշ»
11.00, 16.00 Նորություններ
16.10 Սերիալ «Լեոնցին»
17.05 Յոթերորդ զգայարան
17.40 Տրիումֆ-2000
18.15 Գլուխկոտրուկ
19.00 Նորություններ
19.15 «Երալաշ»
19.25 Կանացի պատմություններ
20.00 Յու. Նիկոլաեւի տարեդարձի երեկոն
22.00 Ս. Գորենկոյի հեղինակային ծրագիրը
22.55 Գ/Ֆ «Իմ զարմիկ Վինին» (դերերում Դ. Փեշի, Ռ. Մակիո, Ս. Թոմեի. ԱՄՆ, 1992 թ.)
01.05 Գ/Ֆ «Լեդի Շաթերլեյի սիրեկանը» (դերերում Ս. Կրիստել, Ն. Քլեյ, Շ. Բրայանթ, Ֆրանսիա-Մեծ Բրիտանիա, 1981 թ.)

9.00 «Սլավոնական շուկա Վիտեբսկում» արվեստի փառատոնի օրագիրը
9.10 «Սլավոնական շուկա Վիտեբսկում». «Օիածան Վիտեբսկի վրա»
10.30 ՊՏՊ-ի փոստը
11.00 Բարի լույս, երկիր
11.45 «Հայրուրը մեկին»
12.35 Ինձ դեզ ռեժիսոր
13.05 Սերիալ «Ընկերները-2»
13.35 Ոսկե բանալի
14.00, 21.00 Լուրեր
14.20 Դաշնություն
15.10 Տերեկային սեանս. Գ/Ֆ «Պինդ երկվորյակները» (Հնդկաստան)
17.15 Երկիր մոլորակ
18.10 «Երեկոներ պոլիտեխնիկում». Ալեքսանդր Կուբնիր
19.05 Իմ ընտանիքը
20.05 Երկու ռոյալ
21.45 «Անշլագ» եւ ընկ.
22.50 Շաբաթվա ֆիլմը. պրեմիերա. Անդրիանո Չելենտանոն «Գրանդ օթել» ֆիլմում (Իտալիա)
00.55 Վերջին սեանս. Դենիել Բերնհարդը «Սրունքոս սպորտ-3» ֆիլմում

9 հուլիս

10.05 Առավոտ լուսո
10.15 Բարեւ
11.45 Շախմատ-64
12.00 Շինուժ
12.35 Մուլտսերիալ «Թշվառները» (13-րդ, 14-րդ սերիաներ)
13.30 Դո, ռե, մի
14.45 Մարդը եւ բնությունը
15.15 Փաստագրական շարք «Մնաս բարով, XX դար. 1937 թ.»
16.15 «Լեգո» հեռուստամրցույթ
16.40 Մեր Մկրտչյանը «Կովկասի գերուհին» ֆիլմում
18.00 Հայորդաց տներ
18.10 Բարի ախորժակ
18.30 «Կամիտաս»
19.00 Երաժշտական տեսադարանից. Շարե Շահիբազյան, Ռոզի Արմեն, Արքուր Այդինյան
19.30 Կարոտ
20.00 Խորհրդարանական ժամ
20.30 Անմեղության կանխավարկած
21.00 Կիրակնօրյա «Հայլուր»
21.40 Մանրամասներ
21.55 8 1/2. Գ/Ֆ «Էդ Վուդ»

Պրոմեթեվս
10.00 Մանկական սերիալ «Գուլիվերի ճանապարհորդությունը»
11.05 «Պահմտոցի»
11.20 NON-STOP
11.30 Հնդկական կինոյի ժամ. գեղֆիլմ «Օտար ափերում»
18.00 Լիամետրաժ մուլտֆիլմ «Ալվան ծաղիկը»
18.50 Վավ. ֆիլմ «Վուդուի ուժը»
19.40 Համերգ
20.00 «Միասին+» (ՄԻՐ)
20.30 «Ներշնչանք». Արկադի Պետրոսյան
21.00 Դասական ընտրանի
21.30 Գործարար Հայաստան
22.00 Ջազ
22.30 «Ոգնի» լոտո
23.30 Գ/Ֆ «Խաբեություն»

11.05 Շեյփինգ Սինդի Քրուֆորդի հետ
11.30 Մուլտֆիլմ
12.00 Տոմար
13.30 Համերգ. Գառնի-2000
14.45 Գանձերի կղզին (5-րդ մաս)
15.00 Հրապարակ
15.15 Ի դեմ
15.40 Հեռագիծ (կրկնություն)
16.30 Մեյ-դեյ
17.00 Գ/Ֆ «Ամանդա»
18.30 Ոստիկան
18.45 Կ/Ֆ «Սուտ պատմություններ ոչ բոլորի համար»
19.45 Օլյայի օրագիրը
20.00 Անուշադրության կենտրոն
23.00 Յոթ քար
23.35 Գ/Ֆ «Բրոնքյան պատմություն»

9.00 Նորություններ
9.10 Բանկային խանութ
9.40 Դիսնեյ-ակումբ «Ալադին»
10.10 Վաղորդյան ասող
11.00 Նորություններ
11.10 Կոիլովի «Անլուրջ նոթերը»
11.30 Քանի դեռ բոլորը տանն են
12.05 Սերիալ «Ալֆ»
12.35 Ասողություն
13.05 Գ/Ֆ «Այն երկրում»
15.05 Ճանապարհորդների ակումբ
15.45 Մի գլուխգործոցի պատմություն
16.00 Նորություններ
16.10 Սերիալ «Լեոնցին»
17.05 Ամեն ինչ հնարավոր է
17.20 Դիսնեյ-ակումբ «101 դալմատին»
17.50 Դիսնեյ-ակումբ «Վինի Թուխի նոր արկածները»
18.15 Որ հիշեն
19.00 Նորություններ
19.10 «Երալաշ»
19.20 Ծիծաղի համայնապատկեր
19.55 Գ/Ֆ «Վայրենին» (դերերում Ի. Սոնտան, Կ. Դենյով, Ֆրանսիա, 1975 թ.)
22.00 Ժամանակ
23.00 ԿԲՀ-2000
01.05 Ֆուտբոլի ժամանակը
01.50 Գ/Ֆ «Երջանիկ օրեր» (դերերում Վ. Սուխորուկով, Ա. Նեւոլինա, Ե. Մերկուրեւ, 1991 թ.)

9.00 «Հայրիկը, մայրիկը, ես սպորտային ընտանիք եմք»
9.55 Ծառայում եմ հայրենիքին
10.20 Մանկան շուրթով
10.50 Բարի լույս, երկիր
11.30 «Անշլագ» եւ ընկ.
12.30 «Քաղաքիկ»
13.00 Ռուսական լոտո
13.40 Մուլտծրագիր
14.00 Լուրեր
14.20 Խորհրդարանական ժամ
15.10 Նոր «Հին բնակարան»
16.10 Երկխոսություններ կենդանիների մասին
17.05 «Կ-2»-ը ներկայացնում է
18.00 Մամուլի ակումբ
19.00 «Միջազգային համայնապատկեր» Ալեքսանդր Գուրնովի հետ
19.35 Կինոյի ժամ. Եվգենի Եվսիգնեեւը «Բարի գալուստ, կամ կողմնակի մարդկանց մուտքն արգելվում է» ֆիլմում
21.00 Հայելի
22.00 Ջեկի Չանը «Աստծո ասպազենը-2» ֆիլմում (Հոնկոնգ)
00.00 «Սլավոնական շուկա Վիտեբսկում». Բելառուսի կրնինցները
01.20 «Սլավոնական շուկա Վիտեբսկում». Ուկրաինայի ոսկե ձայները
02.40 Իրական կինո
03.05 Իրական կինո. վավերագրական ֆիլմ «Նավավարը»

10 հուլիս

9.00 Լիամետրաժ մուլտֆիլմ «Երկու փիսիկ»
10.00 Կիրակնօրյա «Հայլուր»
10.35 Պրեմիերա
11.10 Գ/Ֆ «Վկան»
13.00 Հայլուր
13.20 Ռուբիկոն+
17.00 Հայլուր
17.20 Մուլտսերիալ «Թշվառները» (14-րդ սերիա)
17.45 Իմ տունը
18.00 Փաստագրական ֆիլմ «Ուրախ, տխուր մարդը»
19.00 Հենց այնպես
19.10 Մարդու ժամանակը
20.00 Շեռագիր
20.35 Տունտունիկ
21.00 Հայլուր
21.40 Հեռուստակապալոգ
21.50 Հայաստանի կամերային նվագախումբը Արաբական էմիրություններում
22.15 Կուլիսների ետեւում
22.35 Փաստագրական շարք «Մնաս բարով, XX դար. 1938 թ.»
23.40 Հայլուր
00.00 Կեսգիշերային ճեղքնթաց
01.00 Ռուբիկոն+

Պրոմեթեվս
9.00 «Բարի լույս, Հայաստան»
10.30 «Ամեն ինչ հանուն էն սիրո»
18.00 Մուլտֆիլմ
18.10 Մանկական ժամ. սերիալ «Նինձյա կրիաները», սերիալ «Կոբրա»
19.00 Ամեն ինչ հանուն էն սիրո
20.00 Լրաբեր
20.35 Ռ. Մավիսակալյանի «Հարցեր» հեղինակային ծրագիրը
21.20 Օրը
22.25 «1-02» լոտո
22.30 Գ/Ֆ «Նիխոն»
(24.00 Լրաբեր)

19.05 Շղջիկ
19.30, 21.30, 24.00 Սուրհանդակ
20.00 Ավետա
20.30 Անթեղ
22.05 Գ/Ֆ «Տղամարդկանց միջավայրում»
0.35 Ակնթարթ
0.40 Գ/Ֆ «Ռենեսանս» (Սուրհանդակ)

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.20 Սերիալ «Բաբելոնյան աշտարակ»
16.00 Նորություններ
16.20 Մուլտսերիալ «Ջոնի Քվեստի անհավանական արկածները»
16.45 Աստղային ժամ
17.10 Մինչեւ 16 եւ բարձր
17.40 Համով պատմություններ
17.55 Սերիալ «Բաբելոնյան աշտարակ»
19.00 Նորություններ
19.30 Կոմիքսների կարաս
20.05 Գ/Ֆ «Մեծ ատակցիոն» (դերերում Գ. Վիցին, Ն. Վաղելի, Գ. Ցիլինսկի, 1974 թ.)
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Սերիալ «Գաղտնի նյութեր»
23.55 Պ. Շերեմետ. «Շեյենական օրագիր» (1-ին մաս)
00.25 Դետեկտիվ «Մայլ Համմեր»
01.25 Նորություններ
01.40 «Պարանորմալ երեւույթներ: Փակ դոսյե»

7.00, 8.00, 9.00, 10.00 Լուրեր
7.20, 7.50, 8.40, 9.45 Բարի լույս, Ռուսաստան
7.35, 9.35 Ընտանեկան նորություններ
8.20, 10.20 Սեւով սպիտակի վրա
8.30 ՊՏՊ-ի փոստը
9.20 Հեռուստատեսային ՀՄՍ
10.35 Մուլտսերիալ «Դե, սպասիր»
10.45 Մուլտսերիալ «Սեւ ծովահենը»
11.45 Սերիալ «Գնչուհին»
12.05 Սերիալ «Սանտա Բարբարա»
13.00 Հայելի
14.00, 18.00, 21.00, 00.00 Լուրեր
14.35 «Մարյինա ռոշչա»
15.05 Սերիալ «Սեւ մարգարիտ»
15.55 Սերիալ «Հարուստներն ու նշանավորները»
16.50 Երկու ռոյալ
17.40 Հեռուստատեսային ՀՄՍ
18.30 Հեռուստախաղ «Հայրուրը մեկին»
19.20 Սերիալ «Մարգո թագուհին»
20.25 Վինն-Տոմ-կուր
21.50 Սերիալ «Վայրի հրեշներ»
23.35 Հերթապահ բաժանմունք
00.30 «Վիտեբսկ-2000». խստաղային երգի երիտասարդ կատարողների միջազգային մրցույթ
02.15 «Սլավոնական շուկա Վիտեբսկում» արվեստի փառատոնի օրագիր

@rmineco Global Telecommunications
ԻՆՏԵՐՆԵՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ԻՆՏԵՐՆԵՏ» ՍՐՃԱՐԱՆՈՒՄ: Խանջյան 50: Հեռ. 575823:

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2 Գրանցման թիվ 65. Դասիլ 69150. Պատվեր 1290 Տպաքանակը 4000 Ստորագրված է տպագրության 7. 07. 2000 Գինը 100 դրամ